


# ԲԱԶՄԱՎԷՊ

## ՀԱՆԴԻՍԱԲԱՆ



### ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԳՐԱԿԱՆ

#### ՆՐՐՈՐԴ ԺՈՂՈՎՆ ՆԻ ՀԱՆԴԻՍՆ Ի ՎԵՆԵՏԻԱ

Աշխարհագրական գիտութեանց համազգային առաջին ժողովը գումարեցաւ յԱմսթերս 1871ին օգոստոս ամսոյն մէջ. և արգարութիւն է ըսելն՝ որ անոր առաջին գաղափարը կարողութիւնն պարտական ենք, Պրիքսեյի Արքիւշի Մատենադարանին գրապետին: Եթէ հին ժամանակներն Աշխարհագրութիւնն սակաւագիւտ և եռանդուն սիրողներ ունեցաւ, հասարակաց օգտին իւր իւր եղաւ այն՝ երբոր ուսումնական խուզարկութեանց ոգին՝ ընդհանրական ըլլալով՝ ազատ ընկերութիւններ

առաջ բերաւ՝ աշխարհագրական աշխատութեանց միումն տալու նպատակաւ: Եւ եթէ ասոնց արգիւնքը կարգի գնելու համար, արգէն կանոնաւոր թղթակցութիւններ հաստատուած էին, հաղորդակցութեանց գիւրութենէն օգտուելով՝ դժուարագոյն առաջարկութեանց ետեւէ եղող գիտնոց մէջ հասարակաց պայքար մը շարժելու ժամանակ էր: Եւ ճիշդ յայտ մտածմանց և յայտ պիտոյից Ամսթերսայի ժողովն ծագումն ունեցաւ, որ ճամբայ բացաւ Բաբիլոն ժողովոյն, որ եղաւ յամին 1875:

Աշխարհագրական հանդէսը յուլիսի 15ին բացուեցաւ, և յաջորդ սեպտեմբերի 16ին փակուեցաւ: Ժողովը օգոստոսի 1էն մինչև 11 տեւեց:

Վենետիկոյ աշխարհագրական համագործակցին ժողովը բացուեցաւ սեպտեմբեր 15ին 'ի Պարոն Լեսսերսէ, որ Բարիլո աշխարհագրական Բնկերութեան նոր նախագահ ընտրուած էր՝ վախճանեալ Լա Բոնիսիէր Լը Նուրիի տեղ: Լեսսերս թողուց ապա բուն նախագահութիւնը ձեռնովայի Դեօնի թովմաս իշխանին, որ երկրագնտիս չորս կողմի ճամբորդութենէն վեղդուր Բիլլանի նաւով դառնալով եկաւ, թէպէտ և շատ ուշ:

Ինչպէս և ինչու անուանի գիտնականը, (որ շարժեցան եկան 'ի հեռաւորագոյն աշխարհաց), ընդունելու պատիւը վենետիկոյ ինկաւ՝ փոխանակ Մայրաքաղաքին Հռովմայ, գիւրին է գուշակել: — Հռովմ աշնան ամիսներն լաւագոյն ընակութեան տեղ մը չի կրնար ըլլալ, թէ իրեն հարաւային արեւելեան կլիմային համար, և թէ Արքունեաց բացակայութեանը համար: ... Մայրաքաղաքը դուրս հանելով, ուրեմն պէտք էր ուրիշ քաղաք մը ընտրել. Խտալիա Գաղլիի պէս իմացական միակ կեդրոն մը չունի, և ընտրուեցաւ վենետիկ՝ թէ իրեն յիշատակարանաց գեղեցկութեանը համար, և թէ իրեն ջրանցից սեպհական նորութեանը համար, և թէ իր փառաւոր անցելոյն համար: Մանաւանդ թէ այս վերջի պատճառն քան ուրիշ ամենը նպաստեց այս ընտրութեան:

Յիւրաքանչեւ անցած տարւոյն մարտին մէջ Բարիլո աշխարհագրական Բնկերութիւնը, փափագ ցուցնելով առ Բնկերութիւնն Հռովմայ՝ որ երրորդ ժողովը Խտալիա ըլլաւ, կ'աւելցնէր՝ որ ազնուագին գիւտանքերով, պանչելի գիրքով, բնակչաց աւանդական մարդասիրութեամբ և իր փառաւոր անցելովը Մարգոյ Բոլոյի անուամբ մեծացեալ վենետիկն՝ իսկաւ յարմար կ'երևար գումարման մը՝ որուն միայն նը-

պատուին ըլլայ գիտութեանց յառաջագիմութիւնը:

Մարգոյ Բոլոյի վրայ աւելցուցէք յենոյ եկրարց, Կապոդոյ, Պալպի, Ռամազիոյ, Պեմպոյ, ինչպէս նաև Կրատե, Նիկոյ, Ալպանի, Պրանգալէոնէ, Պրոգարաի, Բավլոյ Դրեմիլանոյ, (թերևս առաջինը որ քննեց և գրեց Նեյտի աղբերականց վրայ), և կ'ունենաք արուեստաւոր ճանապարհորդաց և աշխարհագրական գիտութեանց ամենազոր մշակողաց բաղմութիւն մը, հազոր հինգհարիւրին ժամանակներն 'ի վենետիկ երևցած, և ասկէ շարժած դէպ 'ի չքննուած երկիրներ, հանդերձ նոյն ատենուան միջոցաց դժուարութեամբքը կամ անկատարութեամբ ճանապարհորդելու գործեաց:

Ստոյգ է թէ ամենայն քաղաք, ինչպէս վենետիկ, գիտուններ և կտրիճներ ունեցաւ որ պատմութեան պատիւ կ'ընեն — և ամենուն համար բաւական է Քրիստափոր Գոլմպոսի անունն, — բայց նաև ճամբարտ է՝ թէ չկայ քաղաք որ կարենայ գերազանցել քան զվենետիկ՝ օտարաց վարկը և հիացումը այս ժողովով ստանալու իտալիոյ՝ սիրայորգոր ըզձից մէջ:

Դժուարին էր որ Աշխարհահանդիսին համար ամեն հասած բաները կարենային տեղ գտնել, եթէ Թաղաւորն առատաձեռնութեամբ Արքունի պալատը ընձեռած չըլլար: Բաց յերկրորդ գտնիկնէն, որ Ս. Մարկոս հրապարակին վրայ կը նայի, և քանի մը ներքին սենեակներէն, Աշխարհահանդէսը գրաւեց բոլոր այն մասը որ ճանչցուած է Հին Մատենադարան անուամբ, որ կը նայի Բիւացեղային վրայ: Դիտնական Աշխարհահանգիսի մը չէր կրնար մէկը աւելի մեծակառոյց շինուածի մը փափագիլ: Եագոբոյ Դագդի՝ կաշեցեալ Սանտովիկոյ (Սանտովիկոյ լեռնէն ուր ծնաւ 'ի 1479) հռչակաւոր ճարտարագետէն

առուցեալ, ի ժամանակի և վայելման նաղաղութեան, յորում զարդարուեալա քաղաքն թէ հասարակաց թէ սոսկականաց հրաշակերտ չէնքերով», դեռ լը դիմանայ անարատ ժամանակին նուրբինէն, և է ճարտարապետաց լարմանալիքը, որոնք միաշունչ են նշակելու զայն իբրև ժՁ դարուն վեհետիւյ գեղեցկագոյն շինուածը, մասնաւոր թէ ըստ Պալլադիոսի, և ամենէն աւելի ճոխն և զարդարուն հինն. ուն ժամանակէն մինչև մերը»։ Յանձնուելով Հոգաբարձուաց հասարակութիւնը Ս. Մարկոսի մատենադարանին նստորներն, և Տրապիզոնցի կարգիւնալ բնասարկոնի, Հերոնիմոս Լէանորոյի, Կրիմանիի, Փրանկիսկոս Բեդարդայի մատենալէն և հասարակագիտութեան ուրիշ թողուած երևելի բերանքն, ասոնք տուին յանձնարարութիւնը Սանսովինոյի որ 90 տարին անցած էր, և մեռաւ զայն լմացունէն սոսալ։

Պալլադիոս ճակատն է «դորիկեան և յոնիական ճարտարապետութեամբ և ի սեամբ, զարդուք, և պսակներով»։ այլ ըստ նոյն Սանսովինոյի, «անոր վրայ տառ նշանաւոր է անկրնաղարդը, մեծաւ ճարտարութեամբ և արուեստիւնած, դորիկեան կարգին մէջ երբեք

ի հնոց չմտածուած»։ Կամարաց վրայ ընկողմանեալ արձանքն, կամարաց պորտին և վերնագոյն պսակին վրայ եղած վանդակասեանց անդրիքն՝ են գործք թողմաս Լուպարտոյի, ԱմմաՆացիի, Գաղղանէոյի և Պետրոս Սալուցիի. մտից դրան մէջ դրանդեաց երկու կնանդրիքը Աղիքսանդր վիդգորիայի, և մեծ սանդոյն և սրահին հռչակաւոր կամարին պատկերներն Պոլոս վերանեգէի և Պենետեդոյ եղբորն, Մկրտիչ Ֆրանգոյի, Եագորոյ Դինդորեդդիի, Անտրէաս Սքիալոնիի, և այլոյ։

Երբ մեռաւ Սանսովինոյ, շարունակեց շինուածը նոյն նախագիծով վիշենցիոս Սգամոնցի, ուրիշ անուանի ճարտարապետ մը։

Բայց հիմայ այս չէնքը ալ չի ծառայեր մատենադարանի, Հասարակագիտութիւնը 1812էն ի վեր մատենից թանկագին հաւաքումը Դքսական պալատին մէջ փոխադրելով։

Այսարհահանդիսին պատճառաւ բարձրագոյն վանդակասեանց վրայ դրուեցան ամեն աղագաց դրոշներն ի նշանակ եղբայրութեան, որով գիտութիւնն կը կապէ մէկտեղ զանազանեալ ժողովուրդը։

## ԲԱՅՈՒՄՆ ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԻՍԻՆ

### 1 Սեպտեմբեր

Այս առաւօտ ժամը 9էն քիչ մ'աւալ, կարգադիր մասնաժողովը, Հիւպատոսք և օտար Տէրութեանց նուրբակք և գործակատարք, կը ժողովէին Յոթերուն Պալատին առաջին յարկին սեղրին սրահին մէջ, անկէց խմբովին իրթալու Այսարհահանդիսին բացման, որոնց գլուխ ունենալով զթէանոյի իշխանը, որ Սգալա Տէի ճիկանդի սանդոյն քով անոնց կը սպասէր։

Գրատան պատրգամէն օտար Տէրութեանց դրոշները կը ծածանէին, Բեռոյ կարգադիր Մասնաժողովս և երես

փոխանք կը մտնէին թագաւորական Պալատը, և կ'ընդունուէին քաղաքատեսչէն, քաղաքապետէն, ծերակուսէն և վենետիկ գտնուող գործակատարներէն, իտալական Մասին մեծ սրահին մէջ, ուր կային իտալական Այսարհագրական Ընկերութեան և թագաւորական դրոշները։

Նախ խօսեցաւ յանուն կարգադիր Մասնաժողովոյն Գ. մասին՝ պարոն Գաղղանէի փաստաբանն, շնորհակալ ըլլալով այն ամենայն իշխանութեանց որ Այսարհահանդիսին նպաստամատոյց

եղեր էին, Բետոյ իշխան թէանոյի, իբր նախագահ եարգագիր Մասնաժողովոյն և իտալացի Աշխարհագրական ընկերութեան, յետ շնորհակալ ըլլալու Աշխարհահանգիսին երրորդ Մասնաժողովոյն աշխատանաց համար յերազուիթին գործոյն, և Աշխարհագրական Հանդէսը պաշտօնապէս բանալու համար, խօսեցաւ այսպէս .

### Տեարք,

Տեսնալով այսօր Կարգագիր Մասնաժողովոյն երրորդ Մասին տնտեսն և զըժուար աշխատութեան արդիւնքը, պարտք մը կը զգամ ամենուն առջև ուղղելու առ ձեզ, ամբողջ ընկերութեան կողմանէ, մեր արժանաւոր երախտագիտութեան յայտարարութիւնքը .

Երբ մեզմէ խնդրեցին այսպիսի Աշխարհագրական Հանդէս մը կազմելու, 'ի սկզբունք շատ ծանր և դժուար երեցաւ մեզի այս պաշտօնը. բայց յետոյ նոյն Մասնաժողովոյն իմաստուն աշխատութեամբ և յարատեւ յաղթող ջանիք, ամեն արգելք զիւրացաւ, և այնպէս մեծ եղաւ իր հոգը՝ որ յիրաւի չեմ կրնար արժանաւորութեան համեմատ գովեստ մը գտնել, Որով կուգեմ յայտնել հրապարակապէս գաղտնիք մը, որ այս օրերս յաճախ մոտացս մէջ ներկայացաւ. այսինքն թէ, եթէ վիտնտկոյ չէրեր և պատմութիւնը զինքը սահմանած չըլլային իբրեւ բնական աթոռ մը Աշխարհագրական ժողովոյն, իր քաղաքացեղ ճարտարութիւնը, ճարպկութիւնը և եռանդը՝ առանց ուրիշ բանի՝ բաւական էր զինքը ընտրել տալու ազնուական գործոյ մը համար : (Սիրալի ծափահարութիւնք այսպիսի գորովայն քաջաարտօքեան համար) :

Եւ յիրաւի մեզի մխիթարութիւն մ'եղաւ տեսնելով թէ ինչպէս ամբողջ քաղաքը Մասնաժողովոյն վաստակոյ արձագանգ կու տայ : Պէտք էր այսչափ յուսույն, Բոլոյ, Երեսնոյ, Գապոդոյ, Գոնդի և ուրիշ շատ հաշակախոսն ճանապարհորդաց հայրենիքէն, որոնք այսօր իբր թէ յայտնութիւն առած գերեզմանէն կը տեսնան թէ որչափ զարմանալի պտուղներ քաղեր է արդի գիտութիւնն իրենց վաստակներէն, և կ'ուրախանան որ վիտնտկոյ փառքը նոր լուսով կը փայլի : Ուրեմն այս կրնայ ըստիլ նաեւ քաղքիս հանդէս մը, և այս առթով ինչ որ ալ ըրաւ և սիրտի ընէ քաղքին Ոստիկանութիւնը շատ աւելի կը գերազանցէ

բոն զմեր յոյսերը . և կ'ապահովցընէ վիտնտկոյ ոչ միայն իտալիոյ երախտագիտութիւնը, այլ և բոլոր աշխարհի :

« Շնորհակալութիւն և գովեստ նաեւ մեր և օտար պատուական Գործակատարաց, որոնք եկան Կարգագրելու այս Աշխարհահանգիսին սեպտեմբերի մասունքը : Տեսոյ գիրքներ իրենց վաստակոյ մէջ և զարմացոյ թէ ինչպէս ճարտարութեամբ կըրցան 'ի գլուխ հանել այս ծանր աշխատանքը, վասն զի դործը մեծ էր և ժամանակը շատ կարճ : Բայց տակայն տնտեսն աշխատութեամբ յաղթեցին ամեն դժուարութեանց . այնպէս որ իրենց ջանիքը, կըրնաք այսօր, ինչպէս որ խոստացած էինք, խնայլ ամենեւեց այս Աշխարհահանգէսը : Ուրեմն պէտք է որ նոյնպէս ալ մեծ ըլլայ մեր շնորհակալութիւնը առ նոսա, և կը խնդրեմ որ ընդունին այս մեր անկեղծ բացատրութիւնքը : » (Քալ է) :

« Տեարք, այն գործոյն որուն համար գումարուած ենք՝ չէր կրնար մեր մեծափառ Թագաւորին պաշտպանութիւնը պակսիլ : Բայց իւր վեհափառութիւնը ուզելով ուրիշ հովանաւորութիւն մ'ալ չնորհէ ճանգիսին, ոչ միայն իր անուան փառք պատուեց մեր ձեռնարկը, այլ և ուզեց նաեւ առատաձեռնութեամբ աջնիւ և յարգելի նիւթական օգնութեամբ նպաստել : Որովհետեւ մեր գործոյն աղէկ յաջողութեան համար շատ կ'օգնէ բոլոր Աշխարհահանգիսին այս պալատան մէջ միացեալ ըլլալը, որով թէ ժողովը և թէ Աշխարհահանգէսը պիտի կարենան կատարուիլ գրեթէ մէկ քնակութեան մէջ, այն է իտալական հրաշակերտին՝ Ս. Մարկոսի հրապարակին չորս կողմը : Եւ այս՝ վեհանաձեռնայ նպատակը Նորին վեհափառութեան » :

« Տեարք, իտալիա ոչ միայն վաստակութեան կը դարձնէ իւր Հայեցումաժըլեմ ձեռնածն Թագաւորին վրայ իբրեւ ամօր նեցուկ, այլ կը ճանչնայ գինքը իբր իւր եռանդուն օրդին յառաջացընելու ամենայն ազնուական ուսումն, և ամեն գովելի ձեռնարկութեանց օգնելուն համար » :

Բայց քանիները, որոնք օգնեցին այն գործին զոր այսօր հանդիսապէս կը բանանք, պիտի գտնեն իմ խօսքերէս զատ իրենց կատարած վաստակոյ մէջ Հանելի վարձ մը, Կարծեմ թէ կրնամ աղատաբար հաստատել թէ այս Աշխարհահանգէսը կը գերազանցէ պանաղան մասերուն մէջ իրմէ առջինները, և յայտնի փորձ մ'է այն մեծ յառաջագիմութեան, զոր ըրին քաղաքակիրթ ազգերն այս հինգ տարւոյս մէջ՝

գիտութեան մ'ասպարիզին մէջ, որ օր օրօտան վրայ աւելի աղէկ կը քննուի և կը յարգուի :

« Զօս ամեն հաւաքմանց չեմ կրնար և ոչ փոքր նկարագիր մը տալ համառօտիւ, վասն զի նիւթը շատ ընդարձակ է և ինծի տրուած ժամանակը չատ կարճ, և ոչ իսկ այս համեստ հանգէսը զիս կը թողու զայն կատարելու : Միայն շնորհուի ինձ ըսել, որ մեր Աշխարհահանդիսին մեծ յարգն է որ կրցաւ հաւարել գիտութեան յետին արգիւնքները մեր պատմական և աշխարհապրական փառաց յիշատակարանաց հետ : Զօս կը տեսնուի ծագումը, հօն դանդաղ այլափոխութիւնը, անդին ուսման կատարելագործութիւնը : Տրա Մարտիոյն այն հիանալի մակարդակագունտը որ ճշմարիտ զարմանալիք մ'է իւր ժամանակին, աւելի զարմանալի կ'ընէ արդի աշխարհագրական մեծ աշխատութիւնները որոնցմով լի է տեղիս : Եւ հին աստիղաշփնները և այն անկատար գործիքները որ քիչ դարերով առաջ արուեստին ամենակատարեալներն էին, նոր գործեաց հիանալի ճշգրտութիւնը դուրս կը ցատեցնեն » :

« Բայց, Տեաքը, Զօս կը վերջադնեմ խօսքս : Իմ վախճանս ուրիշ բան չէր բայց եթէ շնորհակալութիւնս մատուցանել թագաւորին, Մասնաժողովոյն, Վենետիկոյ և պատուական Գործակատարաց : Եւ հիմա որ պարտքս կատարեցի, պատիւ ունիմ յայտնելու Աշխարհահանդիսին բացուիլը » :

Յետոյ իշխանն Պարոն Վան տէր Պրէզը տ'Օպրընօ, Գաղղիացի լնդհանուր գործակատարը, որ արգէն նոյն պաշտօնը վարեր էր 1875ին Բարիզու աշխարհագրական ժողովոյն և Հանդիսին, (որուն իբր Բ Աշխարհագրական ժողովոյն մշտամնաց Մասնաժողովոյն ներկայացուցիչ և առաջարկող զվենետիկ, ներկայ ժողովոյս համար յանձնեցին օտար նուիրակները և գործակատարը նախընտաց ճառից պատասխանելու), խօսեցաւ համառօտ ճառ մը շնորհակալ ըլլալով բոլոր օտարազգի նուիրակաց գտած մեծ ընդունելութեան համար : Յետոյ աւելցուց 'ի մասնաւորի և իր ազգին Գաղղիոյ կողմանէ մեծ շնորհակալութիւնքը այս ամեն ազնիւ մտադրութեանց համար :

Յետոյ թէանոյի իշխանը միաբանուլ թեամբ միւս ժողովելոց՝ ամբողջ Աշխարհահանդիսին շրջանը կատարեց, և այսպէս կնքեց արարողութիւնը ժամը 10ին, ապա Աշխարհահանգէսը բացուեցաւ ամենուն :

## ՀԱՆԴԻՍԱԴՈՐ ՆԻՍՏ ԺՈՂՈՎՈՅՆ

16 Սեպտեմբեր

Երէկ առաւօտ ժամը 10.26ին իտալիոյ վեհափառ թագաւորն և թագուհին, Նէապօլոյ բարձրապատիւ Պայազատին և բարձրապատիւ Աօսդայ զըքսին և ուրիշ աւագորերոյն հետ, միաբանութեամբ վենետիկոյ քաղաքատեսչին՝ կը մանային տէի Բրէկատի կողմէ սրահը և կը բազմէին իրենց համար մէջ տեղը բարձրացուցած գահոյից վրայ, հասարակաց եռանդուն ծափահարութեան մէջ : Թագաւորը և Աօսդայ դուքսը զօրավարական նշանազգեստ նին հագած էին : Թագուհին սև ոսկեհուռն՝ ծաղկամբք զարդարեալ հանդերձ մը և գլուխը ժապաւինեալ քօղ մը ձգած էր, իսկ Նէապօլոյ Պայազատն

ծովային տասնապետի նշանազգեստը, վեհազանց ալ կողմի նստարանն երուն վրայ կը բազմէին ժողովոյն նախագահը, որոց գլուխն էր Լեսսերս Բարիզու Բ ժողովոյն հաստատուն Յանձնաժողովոյն նախագահը և մեծապատիւ թէանոյ իշխանը : Չախ կողմը կը բազմէին կարգիլ յանձնաժողովոյն զլիաւոր անդամները : Տոմենիդոյ Ալիօսգինի վենետիկոյ Պատրիարքն իր պաշտօնէի ք, Գերապ : Իգնատիոս Կիւրեղ Մխիթարեանց Աբրահայրն, ասպետն Նեկրի, Հասարակաց Կրթութեան Պատերազմի և Ծովային զօրութեան պաշտօնեայք, Աշխարհագրական ընկերութեանց ներկայացուցիչք և ուրիշ օտար նուիրակք,

բաղմամբիւ զօրավարք, ինչպէս նաև մեծ աւագորեալը թագաւորական գահոյից չորս կողմը բռնած էին. մասնաւոր տեղ մը կար ձախ կողմը քաղաքացի և օտար տպագրութեան ներկայացուցչաց: Թագաւորական գահոյից ստորոտը բաղմած էին ուրիշ բոլոր օտարազգի նուիրակք, Հիւսպատուք, Ատենականք, Երեսփոխանք, և ուրիշ նշանաւոր անձինք:

Չծերակոյտը կը ներկայացընէր բարձրաստիճան ասպետն Դեքիոյ, և զիօրհրդարանը՝ մեծապատիւն Մաւրոկոնադոյ:

Սրահը խուռն բազմութեամբ լեցուն էր: Յետ կեցցէներու առ վեհադունս, լեսսեբս խօսեցաւ հետեւեալ ճառը, որ բաղունս անգամ ընդհատուեցաւ միաձայն ժափահարութիւններէ:

## ՃԱՌ ՊԱՐՈՆ ԼԵՍՍԵԲՍԻ

Ինձ յանձնեալ ըլլալով իտալիոյ տանդեմը՝ յԱմսթերս մնեալ հիմնադրութիւն մը, յանուն 1875ին Ալխարհագրական համազգային ժողովոյն, պարտիմ նախ և առաջ ողջունել զթագաւորն այս մեծ ազգին, որ՝ գիտութեանց մէջ այսպիսի բարձր աստիճան մ'ունի, և որուն հիւրասիրութիւնը կը ժողովէ այսօր զալխարհագէտս համարէն տիեզերաց, Յետոյ պարաք կը համարիմ ինձ մեծապէս ցաւով յիշելու իմ նախորդս՝ զժողպպետն Լա Բոնսիէր Լը Նուրի, որուն պահեալ էր՝ այս երրորդ ալխարհագրական Ուսմանց համազգային ժողովոյս մէջ առաջին ճառախօսութեան պատիւը: Եթէ ուզէի հօս Ալխարհագրական ընկերութեան իւր ըրած մեծամեծ ծառայութիւնքը յիշել, մեր սահմանէն դուրս ելած կ'ըլլայի: Բայց սակայն, այս ծառայութեանց մէջէն գոնեայ մին հարկ է ծանուցանել հօս ամեն ալխարհէ գումարեալ ալխարհագիտաց: Երբ Անլերսա, յետ յաջորդաբար 'ի գլուխ տանելու 1874ին մեր ժողովոց առաջինը, խնդրեց Ալխարհագրութեանց ընկերութեանէն ամենէն հնագունէն շարունակելու գործը, ժովակալն Լա Բոնսիէր իւր իշխանութեամբ, իւր տեսութեանց ընդարձակութեամբ և ուղղութեամբ, յաղթեց այն օրինաւոր ընդդիմութեանց որոց հանդիպեր էր նախ այս առաջարկութիւնը:

Ճրջուց որ եթէ ընդհանրապէս գիտութիւնը զմարդիկ մերձեցուցանելու

կարողութիւն ունի, Ալխարհագիտութիւնն անոնցմէ է՝ որ կ'ընդարձակեն տեսութիւնքը և կը բարձրացընեն ըզմիտս: Այսպիսի դիտողութիւնք հարկ էր որ յաղթէին այնպիսի ընկերութեան մը մէջ, ուր 'ի սկզբանէ, անոնք որ ալխարհագրութեան ծառայած են միշտ պատիւ գտած էին որ և իցէ ազգէ որ ըլլային: Ծովակալն Լա Բոնսիէր, որքան մեծիմաստ այնքան ալ գործունեայ, Պարոն Բէյի ընդհանուր գործաւ կատարին մեծ ձեռնտուութեամբ, կարգեց 1875ին ժողովը, որուն դուք ալ ամենայն սիրով գտնուելնուդ մեծապէս շնորհակալ կ'ըլլանք:

Եթէ այս միութիւնս կրցաւ համապատասխանել Ձեր յուսոյն, եթէ կըրցաւ կերպով մը ձեռնտու ըլլալ ըստ բաւականի 'ի յառաջադիմութիւն այն գիտութեան՝ որուն համար ժողովուած ենք, Բարիզու Ալխարհագրութեան ընկերութիւնը կը խնդրէ 'ի Ձէնջ որ այս ամենուն արդեանց պատիւը ընծայէք իր յամենեցունց արտասուեալ նախագահին, Լա Բոնսիէր Լը Նուրի ծովապետին: Այն մեծարանքն որ իրեն պիտի ընծայէք այս հանդիսաւոր առթիւ, իր ուրիշ ընդունածներուն մէջ յայտնի է թէ փառաւորներէն մէկը պիտի ըլլայ:

Եթէ ներելի ըլլար ինձ յառաջ բերել աստ անձնական յիշատակներ, կը յաւելուի ևս որ Սուէզի և Բանամայի ձեռնարկութեանց բանազնացութեց մէջ, ժողպպետն Լա Բոնսիէր ինծի հա-

մար միշտ պայծառամիտ խորհրդականն մը եղած է, միանգամայն հաստատունն և յարատև նեղուկ մը: Մինչև իր յեւթին վայրկեանները, մեծ եռանդեամբ կը հողար վնետեկոյ ժողովոյն կատարման վրայ, որուն մասնաւոր կարեւորութիւն մը կ'ընծայէր: — Որչափ երջանիկ և ուրախ պիտի ըլլար՝ թէ տեսնար այս ժողովս յայտնի նշանակ չքեղ յաջողութեան մը: . . . Աշխարհագրական գումարման երկու առաջին ժողովատեղիներն էին միջին Եւրոպիոյ նահանգաց մէջ, Անվերսա և Բարիդ: Մտածեցինք որ պատշաճ էր այս անգամ մեր սահմանները ընդարձակել: Իտալիա, իւր գեղեցիկ երկնքովը, իրեն փառաւոր յիշատակներովն, յորս գիտութիւնը մեծ մաս մը ունեցած է իւր Աշխարհագրութեան յառաջացեալ և գործունեայ ընկերութեամբը, յարմար թուեցաւ մեզ քանի մը օր համազգային գումարմանց տեղի ընտրելու:

Դեռ իսկզբան, մինչ ամենայն խընդիրը տակաւին առկախեալ կային, այն պիտի բարձր ծանօթութիւն մը գտանք այս նիւթոյս վերաբերեալ և այնպիսի մտերմական աղետութիւն մը թէանդի իշխանէն, նախագահ իտալական Աշխարհագրութեան ընկերութեան, և յաւաքցէն Տալլա վերտովա՝ ընդհանրական ատենագրութիւն ընկերութեան՝ որ արդէն առաջուց յաջողած համարեցանք մեր խնդիրը, որ՝ Տեաքը, Ձերն էր ևս:

Ուր էր թէ կարենայի այնպէս չքեղ պերճախօսութեամբ ինչպէս անշուշտ պիտի ընէր ծովագետն, մեր ընկերութեան շնորհակալութիւնքը կատարել իտալական Աշխարհագրութեան ընկերութեան, որ այնքան եռանդեամբ ջանաց կատարել իրեն յանձնեալ պատուաւոր և ծանր պաշտօնը՝ ի կազմութիւն ժողովոյն և բարեբաղդարար ի մեր օգուտ ձգել զթագաւորն, իւր իմաստուն պաշտօնեայքը և զներկայացուցիչս այս քաղքիս, որուն արհեստքն և գիտութիւնը ճաճանչաւոր պսակ մը կը հիւսեն:

Իսկ ժողովոյն գործադրութեան և իտալական յանձնաժողովոյն յարաբերութեանց համար, անխոնջ եռանդեամբը մեծապէս նպաստեց Գալալիոն իտալական Աշխարհագրական ընկերութեան մասնաւոր նուիրակն ի Բարիդ: Արդ հաւանաբիկ ժողովեալկալիք աստ՝ իտալիոյ գեղեցիկ երկրին վրայ, ուր բունութեան հարստութիւնք կը մրցին պատմական յիշատակաց մեծութեան հետ: Չկայ մին այն երկիրներէն ուր ծնաւ մեր քաղաքականութիւնը, որուն բաղդը այսպէս սերտիւ կապեալ ըլլայ աշխարհագրութեան առաջին յառաջադիմութեանց հետ, ինչպէս այս:

Յոյնք իրենց աշխարհագրական ծանօթութիւնքը յԱրեւելս ընդարձակած էին: Հռովմայեցիք աշխարհիս տիրերով ի յայտ բերին զԱրեւուտս և զՀիւսիսս՝ Գիտենք ամենքն իս ալ որ ինչ մեծ օղտութիւն եղաւ իրենց հզօր տարածուիլը նոր երկիրներու ծանօթութեց համար: Մերն Եւրոպայն ժամանակ միայն իւր Վեժ ծովուս մերձաւոր մասերովն ծանօթ էր, անկէ անդին անծանօթ: Այսու հանդերձ յանդուգն բանաստեղծ հանճարք և որոնողք, արդէն կը գուշակէին ծովուն խորքը նոր երկիրներու էութիւնը: Հռովմայեցիք, իրենց ժազմուսնէն երկու դար վերջը, Յունական կիսաղետին վրայ աւելցուցր էին զերկիրն Կելտաց, Հոենոսի գաւառները, զՍպանիա, Հարաւայինն Բրիտանիա, Գերմանիա մինչև Կիմբրաց բարձունքը: Այս աշխարհակալութիւնքը միայն ուժով չեղան, այլ հաստատուեցան և տեցին նուաճեալ երկիրներուն վրայ խնամք և քննութիւններ ընելով, համուտ մատակարարութեամբ մը, և այն պիտի վաստակովքը զորս բազում դարք չեն կրցած եղծանել:

Մեր թուականին երկու առաջին դարուց մէջ, Հռովմայեցւոց արշաւանքները մեծապէս ընդարձակեցին աշխարհագրական նախնական ծանօթութիւնքը. մինչդեռ Արեւելքի կողմէն, կ'երթային Արաբիոյ և Հայաստանի վրայ, Ափրիկէի մէջ ի յայտ կը բերէին

զելթովպիա և զՖէս. և յայտնապէս Ներոնի ժամանակ Նեղոսի աղբերաց խորն. գիրը կը յարուցանէին՝ որուն լուծման համար 1800ին պէտք էր սպասել:

Մեծ քաղաքագիտութեան մը պիտոյքները առ Հռովմայեցիս, և ոչ թէ ուսումնական զննողութիւնը ինչպէս առ Յոյնս, պատճառ եղած էին աշխարհագրութեան զարգացման, Այսու հանդերձ ունեցաւ իր մեծ հանճարը և հմուտ տեսութեամբ գիտնականքը, ինչպէս Սենեկա, Պլինիոս բնագէտն, որը գիտութեան ամենամեծ խնամք տրին:

Երբ արեւելեան ժողովրդոց արշաւանքովը հռովմէական տիրապետութիւնը ջախջախեցաւ, Եւրոպա տեսակ մը թմրութեան մէջ բնկղմեցաւ, յորմէ կրցաւ հազիւ ելլալ խաչակրաց ատեն և նոր արշաւանաց մը սպառնալեօք՝ ի Մողոլաց:

Նոյն ատենն էր որ Խննովկենտիոս Դ Քահանայապետն թաթարաց մեծ խանին զրկեց իտալացի Յովհաննէս Տիւբլան տը ֆարբէն կրօնաւորը, որուն պտտգամաւորութիւնն նշանաւոր ժամանակ մը կը կազմէ: Արդարեւ, Եւրոպա մոռցած էր այս հեռաւոր երկիրներուն ի հնուց ի վեր՝ եղած հարեանցի ծանօթութիւնը. Բլան տը ֆարբէնի ճանապարհորդութիւնը սկիզբն եղաւ նորոգելու հին աշխարհի մասանց հետ հաղորդակցութիւնները, ինչպէս որ խաչակիրը մտեցուցած էին զԵւրոպա միջերկրական Արեւելքի:

Այս ժամանակներս, վենետիկոյ հասարակապետութիւնն մեծապէս բարձրացեր էր իր վաճառականութեան միտող հանճարովն և իւր նաւորաց յանդգնութեամբը: Բլան տը ֆարբէնէ քանի մը տարի վերջը, որ յառնէր այս քաղաքիս սեպհական անձ մը՝ պատիւ իւր ուստանին: Անշուշտ գուպկեթը որ խօսքըս Մարգոյ Բուրլի համար է՝ այն երեւելի աշխարհագէտը, որուն անունը կարծէք թէ այնչափ կը մեծնայ որչափ որ նորանոր ճանապարհորդութիւնք յաճախեն իր չրլած կողմերը: Այս անունը միայն բաւական էր յիշեն պարունա-

կել միջին դարու աշխարհագրական պատմութիւնը. պարտիմք յիշել նաև համառօտիւ զՅիփորենդին Բիգոլտի տէ Մոնդէ Գրոյէ, զՅովհաննէս տէ Մոնդէ Գորվինոյ Գալապարացի, զՍտէրիք տէ Ֆրիու, զՊալատուչի Բէկոլոդգի և զՆիկոլայոս Գանդի, որոնք իրենց ճանապարհորդութեանց նպատակ ընտրեցին զԱսիա. և վիվալտի եղբարք՝ որք կարապետք Բարթոլոմէոս Տիագի և Վասգոյ տա կամայի՝ կը փորձէին մինչև ԺԳ դարուն վերջերը՝ յԱրեւմտեց Ափրիկէի չորս կողմն չըլանը կատարել Ննդկաստանի ճամբայ մը փնտռելու համար. և Երենի եղբարք, որք 100 տարի վերջը կը նաւարկէին բեւեռային ծովուց մէջ. և Գա-տա-Մոսգոյ, որ, Հենրիկոս Նաւորդին նպաստիւք, զնաց նոր երկիրներ գտնալու Ափրիկէի արեւմտեան ծովեզրը: Պարտեբերնիս է այս ճանապարհորդաց քով դասել այն գիտունք որք ասոնց զիւտերուն վրայ ուսմամբ աշխատեցան, կերպարանեցին աշխարհացոյց տախտակներով և երկրիս գիտութիւնը կազմեցին:

Յայսմ մասին ալ հարկ է որ խոսելոյ երախտագէտ ըլլանք: Յիշել զՄարինոյ Սանուտը, Ֆրա Մաւրոյ, Պետրոս Վիգանդէ, Բիծմիկանիները, Անդրէաս Պիանզոյ, Ֆրէտուչէ տի Անդունա - միայն զասոնք յիշելով - կը նշանակէ յիշել այն զեղեցիկ աշխարհացոյց տախտակաց հեղինակները՝ որոց հիասքանչ հաւաքումը կ'ընծայէ մեզ Հանդէսը: Որ և իցէ պատիւ մը չէր կրնար հաւասարել անոր՝ որ այսօր իրենց կ'ըլլուի թագաւորական Պալատան մէջ:

Անիրաւ կ'ըլլայինք թէ լռէինք հօս Պապերուն Աշխարհագրութեան ըրած ծառայութիւնքը, որք կազմեցին Վատիկանու աշխարհացոյց տախտակաց այն անգին հաւաքումը, և յորոց ոմանք, ինչպէս Պիոս Բ, հմուտք էին գիտութեանս՝ որուն պատճառաւ ժողովուրդ եղք:

Այն վերանորոգումը որ արշալոյս եղաւ մեր քաղաքականութեան, մեծ դար մը կը կազմէ մարդկային պատմու-



Թեան մէջ, Նոր կեանք մը կը սկսի Եւրոպական ընկերութեանց մէջ, միտք կ'արթնան, գաղափարք առ սակաւ սակաւ կ'ընդարձակին : Գիտութիւնը մեծ մասն ունեցաւ և օգուտ այս շարժման մէջ և Աշխարհագրութիւնն ալ կը գտնէ անդ իւր ամենափառաւոր ժաւմանակագրութիւնքը : Ժե դարուն վերջերը և ԺԶ դարուն սկիզբները հողազրնտիս երեսը կրկին մեծցաւ. 30 տարուան մէջ 3 ճանապարհորդութիւնք կատարուեցան որք մեծ ազդեցութիւն ունեցան ազգաց կենաց վրայ : Այն երեքէն մէկն, որ աւելի նշանաւորն է, պարսիմք բնծայել իտալիոյ գաւկի մը, այսինքն Բրիտտափոր Գոլոմպոս ճենո վաշտոյն իր անունը անմահացաւ մարդկութեան ամենաբարձր առաքինութեամբը. կամաց հետ մեծ վստահութիւն ունէր իր գործոյն վրայ և անպարտասելի արութիւն մը : Հասկնալու համար Գոլոմպոսի որչափ հարկ եղաւ կը ուռիւ խնդրելու համար երթալ գտնալու զԱրեւել յԱրեւմտից, բաւական է յիշել միայն այն ատենի հեռաւոր ծովուց վրայ եղած աշխարհագրական ծառօթութիւնքը, անոնց մթութիւնքը և ցնորքնքը. որչափ անձինք զինքը խենդ կոչեցին ծիծաղով կամ զխալով : Յիշե՛ք նաև հարևանցի իմն գիտաբանէլի Ֆրենցէզի թուաբանը, որ զօրացուց յանդուգն նաւորդին խորհուրդները՝ պայծառացնելով զնոսա :

Գոլոմպոս Գասպիլիոյ և Լէոնի համար միայն չգտաւ նոր աշխարհքը. կը տեսնենք այսօր որ ինչ մեծ տեղ կը բռնէ Հարաւային և Հիւսիսային Ամերիկա ժողովրդոց միաբանութեան մէջ :

Եթէ դիպաց անիրաւ և զարմանալի պարագայով մը, Ամերիկա իր գտնող դիւցազին անունը չլրեց, այսու հանդերձ այն անունը կը յիշեցնէ յաւիտեանս որ ուրիշ իտալացի աշխարհադէտ մը, Ամերիկոս Վեթուչի, ընկերացաւ շատ Սպանիացի կամ փորթուկալցի նաւորդաց, որոնք կրցան քանի մը տարուան մէջ նոր երկրին արևելեան կողմերը ծրագրել :

Գոլոմպոսի գիւտէն առաջ եկած Միջերկրականի նաւահանգստաց տնտեսական հետեւանքները աւելի ծանրացան վասպոյ տա համայնի Բարեյուսոյ զլխոյն չորս կողմը ըրած շրջանէն : Երեք դարէն աւելի Ատլանդական Ովկիանոսի վրայ Ամերիկայի և Հնդկաստանի հարստութեանց վաճառականութիւնը եղաւ : Ժամանակակից պատահարօք մասամբ անոնք յիտալիա բերուեցան և մեծք ամենքնիս կը փափաքինք որ մեծապէս օգուտ քաղէ անոնցմով :

Մակիյանէն առաջ, Ամերիկա իւր Ատլանդեան եզրքներովը միայն ճանչցուած էր. վիշէնդին Բիկաֆէզգա, ընկեր մեծանուն Բորգուկալցոյն, որ առաջին եղաւ կատարելու աշխարհիս շրջապտոյտը, ծանոյց մեզ՝ նշանաւոր ճառի մը մէջ իւր ուսումնական գննողութիւն, այս ահաւոր արշաւանաց պարագայքը և արդիւնքը, յորմէ մէկ նաւ մը միայն կրցաւ վերստին տեսանել զԵրրօպա : Նոյն թուականին մերձ է նաև Հերոնիմոս Պէնժոնի Միլանցին, նոր աշխարհին բնակչաց վրայ մանրամասն ցեղական պատմութիւն շինողաց զխաւորներէն մէկը, որ 14 տարի հօն բնակեցաւ :

Երբ Բրիտտափոր Գոլոմպոս իւր առաջին ճանապարհորդութիւնը կը կատարէր, երկու վենետիկեցիներն Յովհաննէս և Սեպաօղիանոս Գապոդ շարունակելով իրենց հիւսիսային — արևմտեան կողմէն Սիւա հասնելու գաղափարը, 'ի լոյս կը հանէին Հիւսիսային Ամերիկոյ արեւելեան եզրքները : Յովհաննէս Գապոդի ծրագրովն չէր որ 'ի գործ դրուեցան հիւսիսային արևելեան անցից առաջին խուզարկութիւնքը, զոր մեր օրերս կատարեալ կերպով ծանօթացուց Նորտէնքէնտ :

Սակայն իտալացի ճանապարհորդք չէին մուցած Ասիոյ ճամբան. վկայ մեզ Յովհաննէս տ'Էմպոլի, Պարթէմա, Քուրօլի, Պալպի, Վեքքէդդի, Գարլէդդի, Փրիպպոս Սասէդդի, սանսքրիդ լեզուին խուզարկուաց մին :

Հարկ է յիշել հօս և այն բարձր հան-  
ճարը որ կրցաւ ցուցնել երկրիս շար-  
ժումը, այն Գալիլէոսն որ հալածուեցաւ  
իւր ուսումնական կարծեացն համար,  
այն ժամանակաց մէջ՝ յորս կը ծփար  
աւակաւին Միլիոն դարու ստուեր մը:

Ժէ դարը ուշիարհագրութեան պատ-  
մութեան մէջ աղօտ ժամանակ մը կը  
կազմէ. մեծամեծ գիւտք 'ի գլուխ ե-  
լեալ էին. բուն ուսումնական ճանա-  
պարհորդութիւնը դեռ չէին սկսած:  
Բայց սակայն, այս ժամանակուան ճա-  
նապարհորդաց ցուցակին մէջ մէկէն  
աւելի իտալացւոյ անուն կայ: Առանց  
խօսելու Ս. երկրի բազմաթիւ ճանա-  
պարհորդութեանց վրայ, յիշենք հօս,  
զոր օրինակ, զԲիեդրօ տէլլա վալլէ,  
հետմայեցի ազնուականը, որ իւր ա-  
րեւելեան հետազոտութեանց համար  
պտըտեցաւ յԱսիա, մինչդեռ Յովսէփ  
Մէպասդիանի զՀնդկաստան կը քննէր,  
Մարթէէոս Բիլլի Զինաստան ճանապարհ-  
հորդութիւն կ'ընէր, Քրիստափոր Պոր-  
րի կ'երթար Քոչինչինայի թագաւորու-  
թիւնը տեսնալու, և Յովհաննէս տէ  
Լուգզա մեզ կը նկարագրէր թաթա-  
րաց սովորութիւնքը: ՅԱփրիկէ, որուն  
աշխարհագրութիւնն տակաւին մեծա-  
պէս անծանօթ էր անցեալ դարուն վեր-  
ջերը, կը գտնենք զՅակոբ Պարագոյի  
'ի Հապեշաստան, ապա երեք հանճա-  
րեղ քարոյդիք, Յովհ. — Անտոն Գալաց-  
ցի, Տիոնիճի տէ Գարլի, Անտոն Ծուքէլլի,  
բազմաթիւ տեղեկութիւնք կը բերեն  
մեզ, զորս հաւաքած են իրենց առաքե-  
լութեան միջոց 'ի կալուածա փորթու-  
գալցւոց 'ի Գանիկոյ:

Ժէ դարու պէտք է ընծայենք երկրա-  
չափական գրութեանց սկզբունքը ու-  
րոնք քիչ քիչ պիտի ամփոփէին աւելի  
անձուկ շրջափակներու մէջ երկրիս ձևը  
և տարածութիւնը: Գալիլէոս երեակի  
արբանեկաց գիւտողն և Դոմինիկոս  
Գասսինի այս արբանեկաց խաւարմանց  
վրայ ըրած իր հաշիւներովն, մեծապէս  
ձեռնադրու եղած եղան գիտութեան այն  
ճիւղին զարգացման, որուն գլխաւոր  
ներկայացուցիչներէն մէկն եղաւ յի-

տալիա նոյն ժամանակները Բիլլիոյի:  
Յաջորդ դարուն կը սկսին երկու  
ճանապարհորդութիւնք երկրագնտին  
դէպ 'ի այն կողմերը ուրք մեր օրերը  
դեռ ևս տակաւին գիտարամատոյց մը  
նացած են:

Իպպոլիտ Տեգիտէրի որ իրեն յաջորդ-  
ունեցաւ զԲիլլիոյի իտալական Ալխար-  
հագրութեան ընկերութեան ատենա-  
դպիրներէն մէկը, և Օրացիոյ տէլլա  
Բեննա յաջորդաբար զննեցին զԻպեդ-  
ուր անոնցմէ գրեթէ 400 տարի առաջ,  
դացած էր քննելու Օտերիք 'ի Բորտե-  
նոնէ:

Գահը այս ժթ դարուս, որ մարդկու-  
թեան պատմութեան մէջ ամենէն մեծն  
է. նշանաւոր է մտաւորական ուղատու-  
թեամբ որ միայն կարող էր զուսումը  
իր բարձր կէտին հասցնել. նշանաւոր  
իւր սքանչելի գիւտերովն ուրք փոփո-  
խած են զաշխարհ, զԱրիւնդ Արեւմտից,  
զՀիւսիս Հարաւոր մօտեցուցած, և վա-  
ճառականութեան և արուեստից դի-  
մաց նոր երկիրներ 'ի լոյս ընծայած՝  
ուր մեծ շահով կարող են կատարել  
իրենց առուտուրքը:

Ճանապարհորդն պարտաւորեալ  
պայծառացնելու ծանօթութեամբք  
զճանապարհորդութիւնը, ունի աւելի  
ընդարձակ և ճշգրիտ տեսողութիւն-  
ներ. արդէն հասարակաց գիտութեամբ  
ըր պատրաստեալ այնքան հարեանցի չէ:  
ամեն պատահար չի գննէր իբրև խոր.  
հըրդաւոր հետաքրքրութիւն մը առանց  
կամակցութեան: Օգնեալ նաև կամաց  
կամաց գիտողութեան աւելի ճշգրիտ  
գրութեամբք, կը բացուին իր դիմաց  
մասնաւոր խուզարկութիւնք, որոց հե-  
տևանքներն յետոյ մեկնուելով 'ի հան-  
րաքննից մտաց՝ աւելի կ'ընդարձակեն  
Ալխարհագրութեան հորիզոնը:

Այս նոր դրութեան մէջ, գիտենք  
ամենէնիս ալ որ իտալիա վեհանձնու-  
թեամբ մասնակից եղած է աշխատու-  
թեանց, զոհից, որոց միջոցովը քաղա-  
քականութիւնը ամբողջապէս պիտի  
տիրէ. երկրագնտիս: Եւ իր անցելոյն  
պարտապատշաճ դիրքն ունեցաւ...

Բայց չեմ ուզեր ուշացնել այն վայրէկեանը յորում պիտի լսէք այն մեծապատիւ անձը, որ ձեր աշխատութեանց հանդիսադիր պիտի ըլլայ: — Սակայն լմնցընելէս առաջ թոյլ տուէք ինձ մէկ խորհրդածութիւն մ'ալ ընել: Ժողովոյ վախճանն է՝ ընդարձակել նոյն նիւթոց վրայ զբաղեալ մարդկանց հաղորդակցութիւնը, թոյլ տալ իրենց վիճել հասարակաց օգտի խնդրոց վերայ, դիտել ընթացեալ ճամբան և օգնել յառաջագիմութեան: Իրենք ուրիշ օգուտ մ'ալ ունին. ժողովք մը կրնայ բարձր խօսիլ, ձայնը բաւական ուժով է ամենայն ուրիշ լսուելու համար: Ուրեմն մեր ժողովքը ջանայ հասկցընել առանձնական գլխաւորաց որ բաւական չէ յաջողութեանց վրայ ուրախանալ կամ ճանապարհորդաց ձախողութեանց վրայ ողբալ, այլ օգնել անոնց, խնամքով նպաստել, քաջալերել, իրենց պէտք եղած միջոցները տալ որ յաջողին: Պէտք է խոհեմ նպաստիք ըլլան և ոչ մանկունք կորուսեալք: Խնդրենք իրմէ ունենալ իր ազդեցութիւնը հասարակաց կարծեաց վրայ՝ ի խուզարկութիւն երկրագնտիս, ուր տակաւին ընդարձակ ասպարէզ մը կայ: Պէտք չէ իրեն համար գրաւ դնելու իւր աղաւմանդները՝ ինչպէս կ'ըսեն որ կ'ուզէր ընել Դոպպէլլա Թաքուհին, Գրիստափոր Գոյոմպուսի ճանապարհորդութիւնը ապահովցընելու համար:

Բաւական է ըսել միայն՝ որպէս զի գործոյ միջոցները հոգացուին այս քաջասիրտ, արժանաւոր և սիրելի անձանց, որ ազգէ ալ ըլլան:

Բան մը ևս, և կը լմնցընեմ: Բարիգու

Աշխարհագրութեան ընկերութիւնը յանձնեց ինձ՝ յայտնելու իր եղբայրական սիրալիր ցոյցը՝ հօս ժողովեալ Աշխարհագրութեան ներկայացուցաց և ուրիշ համաժող ընկերութեանց նուիրակաց, սկսեալ նախ Խաչակեան Աշխարհագրական ընկերութենէն:

Նախագահ Տէր, Աշխարհագրական գիտութեանց համազգային ժողովոյն վաստակքը շարունակելուն խնամքը ձեզ յանձնելով, որ գործ է գիտութեան և անդորրութեան, պատիւ ունիմ բարիգու 1875ի Երկրորդ համազգային վճռոց հատորներուն հետ մատուցանել Ձեզ նաև անոր յուշարար չբաղրամը:

Լեստեք լմնցընելով իւր ճառը հասարակաց ծափահարութեանց մէջ՝ յանձնեց Թէանոյ իշխանին Բարիգու ժողովոյն յուշարար չբաղրամն և վճիռներն:

Բետոյ բեմը ելաւ և խօսեցաւ Թէանոյ իշխանը փոխանախագահ Թոմապոյ իշխանին հեռաւորութեան միջոց և լմնցուց ճառը, խնդրելով հասարակաց կըրթութեան պաշտօնէն զժողովքը բացեալ հրատարակելու:

Այս արարողութիւնը կատարուելէն վերջը, վեհազանց հաւանութեամբ բեմը ելաւ խօսելու վենետկոյ քաղաքատեսուչն կոմս Տանդէ Սերեկոյ Ալիկիէրի: Ապա Թէանոյ իշխանը ժողովքը արձակեալ հռչակեց:

Յաջորդեցին ապա առ վեհազունս ներկայացմունքներն:

## Ճ Ա Ռ Թ Է Ա Ն Ո Յ Ի Ե Մ Ա Ն Ի

Մեծապէս պատուեցիք զիս շնորհելով խօսել առ Ձեզ, վեհազանց առջև և բազմելու այն դահլ՝ զոր քիչ առաջ Եւրոպիոյ երեւելի և արգիւնաւոր անձանցմէ մէկը բռնած էր, և Խաչալիոյ աշխարհագրական ընկերութեան ա-

նուամբ սիրալիր ողջոյն մը տալու Ձեզ:

Ասկէ աւելի հաճոյական պատիւ մը չէր կրնար ըլլալ ինձի, նա մանաւանդ տեսնալով որ ամեն քաղաքականացեալ աշխարհքէ բաղմախիւ հրաւրեալք զիմք են և յայտնապէս տես-

Նուեցաւ օր մեր հրաւիրած ժամանակ  
արդէն կարևորութիւն մը կար, և Բա-  
րիզու յանձնաժողովէն մեզ վստահա-  
ցեալ դժուարին ձեռնարկը ապաքէն  
կատարելապէս 'ի գործ դրուեցաւ :  
Այս յայտնի է որ զբովանդակ խտալիա  
կը մեծարէք այժմ. որով չեմ երկմտիր  
իմ հայրենիքս ոգևորող զգացմանց  
թարգման ըլլալու, զգացմունք գոհու-  
թեան, շնորհակալութեան և ազնուա-  
կան պարծանաց :

Ոչ միայն վենետիկ, այլ համրէն  
իտալիա գիտէ որ իւր ձայնը լսելի ե-  
ղաւ բարձրապատիւ անձանցմէ, նշա-  
նաւորք մեծամեծ ճանապարհորդու-  
թեամբք և պատուական գրութեամբք,  
մշակք գիտութեան, անյաղթ յառա-  
ջամատոյցք մարդկութեան բարոյական  
և նիւթական օգտից :

Արդ մեզ իտալացւոցս կը մնայ ցու-  
ցընել Ձեզ սիրալիւր գորովական ընդ-  
ունեցութեամբ, որ 'ի վենետիկ հիւ-  
րասէր երկրիս մէջ պիտի տեսնէք, որ  
իտալիա որչափ երախտապարտ է Ձեզ  
իրեն ըրած պատուոյն համար, և այս  
ժողովքին որչափ կարևորութիւն ըն-  
ծայելը և որչափ յարգ ձեր արգիւնա-  
շատ վաստակոց : Ձի, Տեաքք, այն վի-  
ճաբանութիւնքն որուն կը հանգերձիք  
այսօր, և այն շքեղ ցոյցը որուն գովեստը  
ուրիշ անգամուան կը թողում, յուսամ,  
մեր գիտութեան աշխատալից ճամբուն  
մէջ նոր քայլ մը պիտի նշանեն :

Կարևոր չէ որ ես հօս յիշեմ թէ ինչ-  
պէս աշխարհագրական ժողովոց առա-  
ջին գաղափարը ծագած է :

Երբ 'ի Պելճիա Մերդադորի և Որդե-  
լիոսի յիշատակին արձանք կը կանգ-  
նուէին, որոնք ԺԶ դարուն ամենէն հրու-  
չակեալ աշխարհագիրծքն եղեր էին,  
հանդէսը աւելի մեծաշուք ընելու հա-  
մար լաւագոյն կերպ համարուեցաւ ժո-  
ղովել հօն նոյն գիտութեան մշակողքը,  
որոնք այնչափ ձեռնտու եղեր էին այն  
ուսման յառաջարկութեան :

Յիրաւի բարեբաղդ գաղափար մը  
եղաւ այս :

Դուք ամենքդ ալ կը յիշէք թէ Ան-

վերսայի ժողովը որչափ գերադանցեց  
քան զամենայն յոյս, և անոր յաջողիլը  
ինչ ախորժական վարձք մ'եղաւ անոր  
համար վաստակողոց : Ֆլամանաց չքեղ  
քաղաքն այն առթիւ իւր անցեւոյն այն-  
չափ արժանի և ազնուական գտնուե-  
ցաւ, որ իւր սերտ ընդունելութեան յի-  
շատակը 10 անցեալ տարիներ չկրցան  
աղարտել :

Եւ երբ փափագ եղաւ երկրորդ ժո-  
ղովը գումարել, պտտւած դատուեցաւ  
ընտրել զԲարիզ. այս նոր փորձն ալ իւր  
կարևորութեամբն և չքեղութեամբն ա-  
ռաջնոյն պիտի հաւասարէր : Իրաւամբ  
համարուեցաւ որ ամենուն ընդունելի  
պիտի ըլլար առ այն շքեղաշուք քաղա-  
քէն հրատարակուած հրաւերքը, և մեր  
գիտութեան մշակողքը հաւասարապէս  
բազմախուռն պիտի ընթանային :

Եւ կանխատեսութիւնը չվրիպեցաւ,  
նա մանաւանդ կրկնապատիկ գերա-  
զանցեց քան զկարծիս . բազմաթիւ  
գիտնականք ժողովեցան հօն . աշխա-  
տութիւնքը հաստատուն եղան, առատք  
և կարևորք : Նոյնպէս ցոյցն ալ ճոխ,  
շարմանազան և հետաքրքրական :

Այսպիսի օրինակաց յիշատակներով  
ղիւրին է գուշակելը որ երբ Բարիզու  
մշտամնաց Թանձնաժողովը ծանոյց որ  
մեզի անկ էր այս ժողովոց կարգը շա-  
րունակելու պատիւը, 'ի սկզբան վա-  
րանեցանք : Ոչ 'ի վատաստութենէ էր  
այս, այլ յանկեղծ հիացմանէ մը Պել-  
ճիոյ և Գաղղիոյ աշխարհագրական ըն-  
կերութեանց վրայ որոնք բազում ինչ  
կատարէր էին :

Բայց որչափ ալ մեր երկիւղը մեզ  
ծանր և մեր կարողութենէն խիստ վեր  
կը ցուցընէր մեզ յանձնեալ գործը,  
սակայն հաստատուն կամօք և մտօք  
ձեռք զարկիլք գործոյն, վասն զի մէկ  
բանի մը միայն ապահով էինք և այս  
շատ էր, այսինքն թէ կը յուսայինք 'ի  
Բարիզ հաւատարիմ առաջնորդ մը ու-  
նենալ և դժնդակ ճանապարհին առաջ-  
նորդ մը, և միշտ պիտի յիշեմ խորին  
երախտագիտութեամբ պատուական և  
արտասուեալ լա րոնսիէր Նուրի ծո-

վակալին մեզ առատապէս տուեալ ի մաստուն խորհուրդքը և պատուական օգնութիւնքը. և որուն երեւելի ընկերներէն զոմանս այսօր մեծ հաճութեամբ մեր մէջ կը տեսնեմ:

Ուրիշ յոյս մ'ալ զմեզ խրախուսեց. և էր այն յոյսը որ հրաշագեղ վենետկոյ մոգական անուան հետ կցորդ է:

Մտօք յիշելով իւր հին փառքը, որ արդարեւ մեծաւ մասամբ աշխարհագրականք են, մոտածելով իւր մեծամեծ ճանապարհորդացը անկորուստ համբաւը, բազում հմուտ որդւոյը թողունք՝ աշխարհագրական գործերը, որք ամենամեծ կարևորութիւն ունին. նոյն իսկ իր շէնքերը որ գոգցես ազնուութեամբ մը կը պատմեն մեզ աշխարհագրութեան երկայն դարերէ 'ի վեր կատարած յառաջադիմութիւնքը, իւր յարդի գիւտները, վերջապէս հիւրասէր և ազնիւ բնակիչքը, յուսացիւք որ աշխարհիս ամեն ծագաց հաճելի պիտի հնչէ վենետիկեան հրաւէրը: Եւ արդ, Տեսաք, ձեր ներկայութիւնը ծովուց հին թագուհւոյն պարսպաց մէջ, անժխտելի փորձ է որ մեր ակնկալութիւնքն 'ի զուր չէին, և թէ Անվերսայի և Բարիզու երկու ժողովքն արժանի ախոյեան մը պիտի գտնէին զվենետկեանք:

Ստոյգ է, Տեսաք, որ այս ուսումնական մեծ ժողովքները, յորս յուրվակի զանազան հրահանգաց մշակք կը գումարին, կարևոր են քաղաքական ընկերութեան ճամբարիտ պիտոյից. և նոյն իսկ իրենց կենաց բողբոջը յիշեանս կը պարունակեն: Մեր դարը, յիւրաի, ուսումնական մեծ գործունէութեան մասնաւոր ժամանակ մը կը կազմէ:

Բոլոր երկրիս երեսը անհամար քրննիչք, մտածողք և փիլիսոփայք սրտած են այժմ, որք ուշագրութեամբ զննելով բնութիւնն ամեն թագուն գաղտնիքները կը ցուցնեն իրեն ամենաազդու շարժմունքները, ինչպէս նաև ամենազօրեղ այլակերպութիւնքը: Այնպիսի դրութիւնք կը մտածեն որոնք կարենան պարունակել շատ մը երեւոյթներ,

և կը խորհին այնպիսի իմաստասիրական դրութիւնք որք բոլոր գիտութեանց յետին յառաջադիմութիւնքը յիշեանս բովանդակեն:

Եւ միթէ ուսումնասիրաց այնչափ բազմապատկուելով՝ բնական չէ որ անոնք որոնք նոյնդունակ հետազօտութեանց և խորհրդոց կը զբաղին և որոնք նոյն նպատակը ունին, զգան մերթ ընդ մերթ ժողուելու կարևորութիւնն այնչափ ազնուական ճգամքը ստացած զննողութիւնքը իրարու հաղորդելու համար:

Ձի հանդիպիր շատ անգամ որ ազատ, մանրամասն, բարձրաձայն վիճարանութեամբք աւելի լաւ պայծառանան գաղափարք, քան 'ի ձեռն անկատար ծանուցմամբք տպագրութեանց:

Եւ բաց յայսմանէ ճամբարիտ չէ որ գաղափարաց հաղորդութեամբ, առանձնական յարաբերութեանց հաստատութեամբ, իւր և ուրիշին արդիւնքը աւելի մօտէն տեսնելով, իւրպեանչիւր որ աւելի ընդարձակ գաղափարք տուն վերագաւանայ, մեծագոյն սիրով կապուելով իր ուսման, և աճի և բորբոքի 'ի սրտին աստուածային կայծէն այն եռանդը՝ որ միայն զմարդիկ ազնուական և անշահախնդիր վաստակոց կը պատրաստէ և կը վառէ:

Այսպէս ահա կը տեսնուի մտաւորական աշխարհի մէջ նոր դարուն աշխարհակալութիւնն և իր մեծ փառքը քան զհինը, այսինքն ազատութեան և պայքարի անբռնադատութիւնը, որ ամենուրեք և միշտ 'ի գործս ընդ առաջ կը հանէ մեզ բնութիւնը:

Ազատութեան և պայքարի այդ սկզբամբ 'ի ձեռն տրամաբանութեան և փորձառութեան սրբազան շնոյն, փառատեցաւ այն մառախուղը, որով պատեալ էր ամենայն գիտութիւն, և այս կենդանացուցիչ սկզբունքը արդ կատարելապէս յարգեալ է ամենայն ուսումնական մեծամեծ ժողովոց մէջ: Ուրեմն անտարակոյս մարդկային խորհրդոց պատմութեան մէջ նշանաւոր տեղի մը պահեալ է իրենց:

Տեսաք, ի մեծամեծ փոփոխումնս զորս անհուն տիեզերքս մեզ առաջի առնեն, մարդկային ընկերութիւնը աւանդէն մեծն է և զամենը յինքն կը պարունակէ:

Մարդկային ազգը կը յառաջէ:

Անհամար միգրամածք, յատեցեալն դրութիւնս փոխուեցան, որք յետոյ նոյնպէս ուրիշ մոլորակաց և գունդերու կեդրոն համարուեցան: Բազմաթիւ դարուց շրջելով՝ նախնի կենաց ամենապարզ ձևքն երկար և անզգայ կերպարանաւորութեամբ կրկնեցան ըսքանչեալպէս յայս ձևակերպեալք և կատարեալք և նուրբ զգացողութեամբ մը Արիստոտելի, Նևտոնի և Գալիլէի վրան մտքերը միացնող անչափ կամանքին առկէ զարմացեալ կը մնանք:

Նոյն տեսարանը կը գտնենք դարձեալ մարդկային ընկերութեան երկայն և վշտագին, այլ յառաջադէմ ընթացից ճանապարհին մէջ, և շարժումը կը շարունակէ: Այս ընթացքը մերթ աւելաւոր, մերթ ամենադանդաղ, մերթ մինչև անգամ կեցած երևնալը, և մանաւանդ իր տնհուն մակաշրջանակին մէջ յետագարձ ընթացք մը առնուլ՝ պատմութիւնը մեզ կը ցուցնէ, և արդ իսկ երբեմն կը տեսնանք ծածկեալ ահեղ պատերազմաց, վշտալից յեղափոխութեանց մէջ՝ որք աղէտալի նշխարք են ընտելեան վայրագ և մարդատեաց ազդմանց:

Այսու հանդերձ այն շարժումները կայ, և կրնանք ըսել որ արդ արագագոյն և անդիմադրելի է: Եւ եթէ այս

օր այսպէս է, եթէ մարդկային ընտելութիւնը մտաւորական և ընկերական առողջ և կատարեալ վիճակին հասած է, պատճառը դուք էք որ դիտութեան Ձեր թանկագին օգնութեամբը կը նըպաստէք. այս Ձեր մեծ փառքն և պարծանքն է, այս Ձեր բարձր պաշտօնն է, յայն ամբողջական կազմութեան որուն ուղեղն դուք էք:

Արդ, դիտութեան այս կրթիչ պաշտաման մէջ աշխարհագրութիւնն աւանակարեւոր տեղին ունի. և ոչ թէ կըրնայ Ձեզ մրցիլ այս պարծանքիս, եթէ զուարթ վստահութեամբ մը աշուրնիդ դարձնէք Ձեր աշխատութեան արգեանց վրայ: Ի հին ժամանակաց մինչև մեր օրերն, յԱրգոնաւորաց մինչև Սթանլէյ, յԱնտոնէ և Մեյլայէ մինչև Նորտոնսքէյլս և Բիլդէր, յաղթանքաբողջէ մինչև ձեզմէ ամենէն անուանին, դուք ընդարձակելով զաղափարքը աշխարհիս վրայ, քաղաքականութեան նորանոր ճամբաներ բանալով, վաճառականութեան նորանոր կայաններ, աշուրական դրօշակիրք եղաք և պիտի ըլլաք միշտ, որ պարզեալ դրօշիւք կը ցուցնէք մարդկային ընտելեան դժուարին յառաջադիմութեան ճամբան:

Տեսալք,

Այս մաղթանագը կը հրաւիրեմ զՁեզ առաջարկեալ դժուարին դործոյն աւրիաբար պատրաստուիլ. և մեր օգոստոսական վեհազին շնորհալից թոյլտուութեամբը, Համազգային Գ. Ժողովոյն բացումը հրատարակելու պատիւն ունիմ:

## ՃԱՌ ՍԵՐԵԿՈՑ ԱԼԻԿԻՐԻ ՎԵՆԵՏԿՈՑ ՔԱՂԱՔԱՏԵՍՁԻՆ

Իտալիոյ արքային Ումպերդոյի Ավետարանութեանը, Մարգարիտա Թադուսոյն Ավետարանութեանը, որ աշուրական պարծանք մ'է և փառք ամենայն իտալական սրտի, Նեապոլոյ իշխանին արքայական բարձրութեանը, Առաջայի արիասիրտ դքսին արքայական բարձրութեանը, այս մեր իշխանաց որ հաճեցան պատուել զբաղաւոր

և այս հանդիսաւոր Ժողովքը, Վենետիկ երախտապարտ սրտիւ կը խոնարհի:

Եւ Վենետիկ անուամբ սերտ ողջոյն մը կը մատուցանեմ Ձեզ բոլորեցուն, ով ամենայն ազգաց շքեղ նուիրակ օտարազգի և իտալացի անուանիք, յանդուգն քարոզիչք քաղաքականութեան, անխնայ խողարկուք նոր երկիրներու և նոր Ժողովրդոց, որ ախորժալուր հրա

վիրանաւ հօս գումարեցաք գիտութեան  
ասպարէզը ընդարձակելու և մարդկա-  
յին յառաջադիմութեան պսակին վը-  
րայ նոր սաղարթ մ'ալ աւելցնելու :

Վենետիկ պատուեալ զԶեզ հիւր-  
ընկալելու , մեծապէս երախտագէտ՝  
ուրիշ հաւասար քողաքաց մէջ զինքը  
նախամեծար ընտրեցնուզ համար , գոր-  
ծոյն մեծ պատասխանատուութիւնը  
կը զգայ , կ'ըմբռնէ նշանակութիւնը և  
'ի տարակուսանա թէ իրեն ընծայեալ  
պատուոյն արժանապէս համապատաս-  
խանելու ըզձից համեմատ են իր քա-  
ղաքացւոց ոյժը և ջանքը :

Տեղւոյս շքեղութիւնը ուր իմ տկար  
ձայնս կը հնչէ , առաւել քան զամե-  
նայն խօսք աւանդութեամբք և ժամա-  
նակին յիշատակօք կը յիշեցնէ մեզ  
ներկայիս հսկայաքայլ յաղթութիւնքը :  
Թերեւս այս աթոռոց վրայ բազմեալ ա-  
պագայն գուշակելով՝ մտածուեցաւ եր-  
բմէն այն մեծիմաստ գործոյն վրայ ու-  
րով Գնդուեցան Ովկիանու մրկեցազ զայ-  
րոյթքը և յԱրեւել ազատ և յարգա-  
րեալ ճանապարհք կազմուեցաւ հին  
թագուհւոյն :

Այսօր վենետիկ , իմ միջոցովս , այս  
սրահներուս մէջ խնդալից կ'ողջունէ  
այն անձը որ մտացը զօրեղ արուժեամբ  
հուսկ լուծեց այն գծաւորին խնդիրը և  
անմահացուց իր անուիր , ամեն օր հա-  
րիւրաւոր ազգաց նաւերէն օրհնեալ ,  
որոնք կը կտրեն կ'անցնին Սուէզի ջրը-  
անցքը :

Որչափ ընդարձակ ժամանակ , որչափ  
երկար և զժնդրակ քաղաքականութեան  
անցից ճանապարհ մը , որքան խաբե-  
բայ ցնծութիւնք , ցաւք և որչափ արիւն  
մարտիրոսաց , և զոհք ժողովրդոց զմեզ  
կը բաժնեն այն ժամանակէն , յորում  
ողորմելի առաքատաւոր փոքր նաւ մը  
յվերքեա կը հասցնէր զՄարդոց Բուլոյ՝  
անմահ ճանապարհորդը , խորհրդաւորն

Ասիոյ շնաշխարհիկ դաւառաց պան-  
դուխոր :

Եւ որչափ յաղթանակք այն օրուրնէ  
մինչև այս օրս , յորում մերս վենետիկ  
կը հիանայ տեսնալով յայն չքեղ Հանդէս  
զաշխարհս նկարագրեալ , և կը տեսնայ  
իր առջև իրեն մեղական նկար մը մարդ-  
կային մտաց չքեղ և արդի աշխարհա-  
կալութիւնքը , միացեալ եղբայրական  
կապով մը օրհնելու այն առաջին դիւ-  
ցազունքն և ճշմարտութիւնքն , որք ա-  
ռասպել թուեցան , բայց ստոյգ գուշա-  
կութիւնք մնացին Գրիստափոր Գոլում-  
պոսի նաւուն խելաց վրայ :

Յամայի սառուցեալ միայնութեանց՝  
զորս տժգոյն արշալոյս մը կը մխիթարէ  
Ափրիկեան ահաւոր անտառներէն , ուր  
գազանին ոռնալուն կը համապատաս-  
խանէ մարդոյն վայրագ աղաղակը , 'ի  
յետին դեռ ևս անկոխ սահմանաց , բիւ-  
րաւոր ձայնք , ով Տեաքը , այս օր կը  
բարձրանան : Զայնք են այդքիկ այս  
մեծի Ողիսականին մարտիրոսաց , զգ-  
մայեալք 'ի դրօշն քաղաքականութեան  
որ այսօր իր ծալքերը կը պարզէ Ս .  
Մարկոսի վրայ :

Եւ սուրբ պարծանք է իմոյս խտալիոյ ,  
որ այն ձայներուն մէջ իւր իսկ բնիկ  
բարբառոյն քաղցր հնչիւնքը կը լսեմ :  
Կրկին շնորհ կը մատուցանեմ Զեզ ,  
ով Տեաքը , շնորհակալութիւնք ազնուա-  
կան սկզբնաւորութեան գաղղիական  
ընկերութեան , շնորհակալութիւնք նոյն  
և իտալականին որ զձեզ կը հրաւիրէր  
'ի վենետիկ՝ մեծ ժողովոյն , և որ իմաս-  
տուն սիրով գիտցաւ և կրցաւ ձեր խոր-  
հրդոց արժանի տեղիք պատրաստել ,  
շնորհակալութիւնք խորհրդարանին և  
վարչութեան որ առ ընկերութիւնն մի-  
ջոցովք առատաբաշխ և նեցուկ եղաւ ,  
շնորհակալութիւնք և Զեզ հրաւիրեալք  
մեծանունք , որ սիրով լսողք եղաք հրա-  
ւիրանաց :

1 Հայ Թարգմանիչս կրնայ յիշեցնել այս  
տեղ՝ ազգային իրաւամբ մը , որ և թէ վենե-  
տիկէք այդ իրենց անմուտց պարծանք ու պաշ-  
տելի ճամբորդք՝ որ և է տեսակ նաւով մը զրկե-  
ցին յԱյսս , 'ի նաւահանգիստ Հայոց , հօն յետ  
և բկար ամիսներ զինքն հիւրընկալէն վերջը ,

1 Եւսն Բ (կամ Գ) Թագաւորն Հայոց , յամբ  
1271 , իր մէկ ոչ աննան՝ այլ պատերազմական  
զինեալ նաւովը զրկեց՝ բանախօսին յիշած  
Աբբէս քաղաքը , առ նորընտր Պապն (Գրի-  
գոր Ժ) :

Եւ արդ ներուի՛րնձ որ ըմպնեմ խօս-  
քըս ողջունելով և զհեռաւորս որոնք ՚ի  
ծովու և անբնակ դաւառաց մէջ կամ  
վտանգաւոր անցքեր կը փորձեն և կամ  
կը բռնադատեն զապստամբ կոյսն բևե-  
ռային, յայտնելու իր սառուցեալ պըճ-  
նազգեստէն այլ ևս մաս մը. կ'ողջու-  
նեմ՝ ձեր ընկերները ո՛վ քաշանուն պան,

դուխտք, որք այս հանդիսաւոր օրս  
չի կրցան մեզի հետ միանալ. ողջոյն մը և  
առ իշխանն տանն Սափոյիոյ որ միշտ  
առաջին է պատուոյ ճամբուն մէջ, և ընդ  
փոյթ ձեր մէջը պիտի բազմի դառնա-  
լով յայն յԱրևելից՝ ուր աւանդութիւնը  
ձեր նախորդաց մէկուն չինակաք Ողիմ-  
պոսը ցուցուց :

## ԸՆԴՀԱՆՐԱՒԱՆ ՆԻՍՏ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ

### 17 Սնպոսներ

Նախդիկալ նախագահութեան ա-  
թոռ կը բազմի և կը յայտարարէ  
նստոյն բացումը ցորեկունէ ետքը  
ժամը 3,19ին :

Նախագահը գերմաներէն ճառախօ-  
սութիւն մը կ'ընէ, յորում հռչակաւոր  
ճամբորդն կը յայտնէ իրեն համար մեծ  
պատիւ ըլլալը, այս ժողովոյն մէջ Գեր-  
մանիոյ ներկայացուցիչ անուանուած  
ըլլալուն : Ետ ունիւր զիտալիա իբրև  
առաջին մայր ամենայն գիտութեանց  
և ճառելոյ գովութեամբ վարչութեան  
և մեր գիտնականաց աշխատութեանց  
վրայ, իմացուց որ իրեն ճառախօսու-  
թիւնը պիտի շարունակէր իտալերէն  
լեզուաւ, ներումն խնդրելով լեզուա-  
բանական թերութեանց, որ շատ վարժ  
չըլլալուն համար, կրնային բերնէն խու-  
սափիլ : Բուզեալ սրտով, յիշեց զծեր  
սպարապետն Պայըր, պարագլուխ Գեր-  
մանայի աշխարհագիտաց, որ փափա-  
զած էր բազմիլ այն աթոռոյն վրայ և  
յորմէ զրկուեցաւ վերջին օրն ընտա-  
նեկան ծանր դժբաղդութենէ մը :

Հասարակաց ծափահարութեանց մէջ  
ոտք ելաւ Ֆերրերոյ սպարապետն իտա-  
լացի, և խօսելու հրաման առնելով, ա-  
ռաջարկեց որ համօրէն ժողովէն սիրա-  
զեղ ողջոյն մը զրկուի Պայըր սպարա-  
պետին, հայր ամենայն երկրաբանից  
(ինչպէս որ զնա անուանեց) . առա-  
ջարկութիւնը ընդհանուր ծափահա-  
րութեամբ ընդունուեցաւ . ապա նա  
խագահն հրաւիրեց զընդհանուր ատե-  
նադպիրն՝ զՍաուցիշն Տալլա վետտ.

վա, կարգալ բացման գումարման որո-  
շողութիւնքը :

Ետ զանոնք ընդունելու, հրաւի-  
րուեցան նաև փոհանախագահք կամ  
ուլթն խմբից ատենադպիրք կարգալու  
իրենց խմբերուն որոշողութիւնքը :

Լմեցնելով այս ընթերցմունքները,  
կարճ ընդհատութեամբ նախագահը  
առաջարկեց Դիւր սպարապետին ճա-  
ռելու կորնթոսի պարանոցին հատման  
վրայ :

Սպարապետն հետեւեալ կերպով խօ-  
սեցաւ :

\* \* \*

Կորնթոսի պարանոցին երկիրը պատեալ  
է հիւսիսէն Ժերանիէն լեռանց շղթայով,  
որոց բարձրութիւնն 800էն մինչև 900  
մէդր է, և հարաւէն յՅիէն լեռանց, որոնք  
բարձր են զրիթէ 600 մէդր : Այս երկու  
շղթայքը պարանոցը կը փակեն, որ այս-  
պէս ճնշալ ամենափոքր բարձրութիւն  
մ'ունի :

Ջրոց բաժանման զիծը կը կտրէ զպա-  
րանոցն հիւսիսային արևելեան ծուռ ուղ-  
ղութեամբ, Լիզինեան ծոցէն մինչև հա-  
րաւային արևմուտք, մօտ Ակրոկորնթոսի :  
Լեռնադաշտակ մ'է այս, որուն գագաթան  
բարձրութիւնը 78 մէդր կը հասնի, և որ  
պզտի լայնութիւնն մ'ունի . այնպէս որ  
ամբողջական զծին վրայ, այն զանգուածը  
յորմէ լրանցքը պիտի անցնի 3 1/2 քիլո-  
մէդր միայն լայն է, մնացորդը կազմեալ  
է հողի խաւերէ, յաւազուտէ և խճերէ :

Արդի Քալամարի նաւահանգստին հա-  
րաւային — արևմտեան կողմն և ՚ի ստորոտ  
պարանոցին հին քաղաքին աւերակաց, ձոր



մը, լայն իրր 30 մէզր, ծամածուռ, և հիւսիսային - արեւելքէ հարաւային - արեւմուտքի խոտոր ուղղութեամբ՝ կը մտնայ 'ի կեդրոնական զանգուածն: Զանգուածիս միւս կողմը կայ ուրիշ ձոր մ'ալ, որ շարունակելով գագաթան գծին ուղղութիւնը կարճ երկայնութեամբ և հին պարսպին աւերակաց ստորոտին քովէն շրջան մ'ընելով, կու գայ վերջանալու Կորնիթոսի ծոցին մէջ:

Այս ձորերէն առջինին մէջն աղբիւր մը կայ, ուր ամբողջ նդանակին մէջ անգագար ջուր կը ըղնէ, և որ սպառնումապէս 'ի նախնեաց ալ գործածուած պիտի ըլլայ: Այս ձորին մէջ կան այլ ջրհորներ, որք նոյնպէս առատ ջուր կու տան:

Կեդրոնական լեռնադաշտակին մէջ կը գտնուին մատղայ շոգիններու անտառներ (ծովային շոգիք): Ծովէն շնչած սղոխ մը կը զովացընէ միշտ զայն մէկ կողմանէ միւս կողմը:

Պարանոցին երկու ծոցերուն մէջ, ամենակարճ հեռաւորութեան կէտին վրայ, կը տեսնուին տակաւին, լեռնադաշտակին երկու զառ 'ի վայրից ճիշդ ուղղութեամբ, Դերոն կայսեր՝ Քրիստոսի թուականին առաջին դարուն երկրորդ կիսուն մէջ սկըսած աշխատութեանց հետքերը:

Եզինեան ծոցոյն կողմը կը տեսնուի ընդարձակ տափարակ մը, որուն յատակին լայնութիւնը գրեթէ 40 մէզր է, և կը յառաջէ դաշտավայրէն մինչև ծով 1,500 մէզր երկայնութեամբ: Վերջուած հողը՝ երկու կողմէն բարձրացած են և կատարեալ յայտնի բարձր կը կազմեն: Այս խրամը կը ներկայացընէ նաև զանազան աստիճան փորուածքներ 'ի ժայռս, որոնք 59 մէզր բարձր են. բայց այս կարգերն հազիւ քանի մը մէզր միայն խորութիւն ունին:

Այս կողմանէ խրամին հետքերը կը տեսնուին ծովէն 2 քիլոմէթր հեռու. բայց այս կողմն ալ նոյնպէս նշանաւոր աշխատութիւնք եղած չեն:

Երկու կողման ալ վերջին հետոց վրայ ուղիղ գծով կան այլ և այլ յառակուսի ջրհորներ, զանազան խորութեամբ 3 մէզրէ մինչև 16, որոնց ութնութանս դար առաջ շինուած ուղղահայեաց կողերը գրեթէ գեոանեղծ մնացած են:

Լեռնադաշտակին վրայ ջրհորից մօտ կը գտնուին երկու լայն ջրամբարներ աղէկ պահպանուած. այս ջրամբարք նոր աշխատութեանց համար կրնան մեծապէս օգտակար ըլլալ:

Այս երկրին նկարագրութիւնը կատա-

րելու համար, պէտք է յաւելուլ նաև՝ որ պարանոցին ամբողջ երկայնութեամբը կան մեծամեծ պարսպաց աւերակք, որք ժամանակու ծառայած են պաշտպանելու Պոնտոսին և ընդգէմ հիւսիսային յարձակմանց. և այս պարսպաց հարաւային կողմը կը տեսնուին 'ի նախնեաց կառուցեալ մեծ քաղաքներու հետքեր:

Եւր ջրանցքին բացման հրամանը ինձ հազորդուեցաւ, այն տեղիւրը հետաքննելու զրկիցի զվէրսդրը, գլխաւոր ճարտարապետ Պրանտուա ջրանցքին, որ արդէն հարիւն պարանոցին տեղագրական տախտակն հանած էր, ըստ օրինակի միջովկիւս նական ջրանցքին, րնարելու ամենայարմար գիծն և երկրին մասնական բազադրութիւնը:

Այս ճարտարապետը, ունենալով իրեն ձեռաց ներքև գործաւոր ճարտարապետներ, փորողաց գլխաւոր մը և իրեն օգնական պիտանի ճարտարապետներ այս գործոց համար, հիւսիսէն և հարաւէն լեռանց երկուց շղթայից մէջ պարունակեալ ամբողջ պարանոցին տեղագրական տախտակն հանած է և այլ և այլ ծակեր ընել տուած է:

Երեք տեղագրական տախտակք մասնաւորապէս ամբողջացած և գծեալ են:

Առաջինը կը միանայ Դերոնի ճարտարապետներէն ընտրեալ գծին հետ. 6342 մէզր երկայն խորսխով և 78 մէզր բարձր գագաթամբ ծովու երեսէն:

Բաց ասէլ, Թիւ 1, կ'ընթանայ ընդ երկու ձորերի, որք զանգուածը կը պատեն. այս գիծը 6740 մէզր երկայն խորսխով և 73 մէզր բարձր գագաթամբ է:

Թիւ 2, աւելի գէալ 'ի հարաւային կողմը, Եզինեան ծոցին վրայ, Քէքրիօէս մեկնելով, կ'անցնի ձորէ մը գրեթէ զուգահեռական Թիւ 2ին, յետոյ այլ և այլ անգամ ծամածուռ պարանոցներ կտրելով կը շարունակէ միւս զառ 'ի վայրին վրայ միւս քայի գետափանց ձորը, և յետ պզտի միւրոց մը կտրելու, կը վերջանայ ծովու մօտ նոր Կորնիթոս քաղքին հարաւային կողմը: Այս գիծը 11 քիլոմէթր ընդարձակութիւն ունի:

Ի քննութեանց հետեւեալ ցուցակն առաջ եկած է.

Նախնեաց գիծն	9,430,000 մէզր խորանարդ.
Նոր կերպ Թիւ 1.	9,186,000 »
» » 2.	13,424,000 »

Թիւ 1 և 2 բազմաթիւ կոր գծեր ունին փորբազայն շառաւիղով գրեթէ 2,000 մէզր, մինչդեռ Դերոնեան կոչուած գիծն ուղիղ գծով է:

Այս վերջի յոտակազմին գերազանցու-  
թիւնը միւս երկու կերպիւրէն ալ կը յայտ-  
նուի. նախ և առաջ այս յոտակազմին  
մէջի փորձելու երկրին բաղադրութիւնն՝  
գլխաւորապէս է կազմուած 'ի դիւրակոտոր  
խճաքարից և կոպճաց կոյտերէ' խոտնեալ  
կոյտին գանգուածով, երկրի մը Համեմա-  
տութեամբ դիւրաւ աշխատելի և որ բա-  
ւական դառ 'ի վայր ալ է, մինչդեռ Թիւ 1 և  
2 գծերն կ'անցնին շատ աւելի պինդ խճ-  
ճաքարերէ ձևացնալ երկրէ մը, որք 'ի  
հետց շինութեանց տարրերի տեղ ծառա-  
յած են, ինչպէս որոշ կը տեսնուի այս  
գլխերու մօտ գտնուող բազմաթիւ քա-  
րահատներէ:

Ներոնեան յոտակազմին հրորորդ օգու-  
տն՝ գառ 'ի վայրից գրքին յաջողութեան  
վրայ կը կայանայ, որ է բսի՛լ գառ 'ի վայրը  
ձորից ջրերուն հոսանքէն ազատ է և այս  
ջուրերը միւս երկու գլխերուն մէջն կ'ինկ-  
նան: Միանգամայն այս գիծը կրնայ օգ-  
տել այս ձորերուն փորումը տարերից  
կոյտին տնտեսական օգտակարութեան  
համար: Կրնանք յաւելուլ, որ Ներոնեան  
յոտակազմը նաւարկութեան համար շատ  
գերազանց պիտի ըլլայ առանց ծամածու-  
թեան, և հետեւապէս արագ և դիւրասա-  
հանցքով:

Երկու ծոցերու լրանցից ծայրը գետ-  
եկրեքէն 200էն մինչ 500 մէզր հեռաւորու-  
թեամբ կը հանդիպին հանգարտ և խոր  
վտակաց:

Ուստի այս յատակագիծն է, արդէն 'ի  
Ներոնէ ընտրեալ, զոր մենք կ'առաջար-  
կենք 'ի գործ դնել:

Ջուրին խորութիւնը և խարսխին լայ-  
նութիւնը Սուէդի ծովային լրանքին հա-  
ւասար պիտի ըլլան, որ է բսի՛լ 8 մէզր խոր  
և 22 մէզր լայն 'ի խարսխին:

Նաւարկութիւնն այս ժամանակին մէջ  
շատ յաճող է Թէ՛ Կորնթոսի և Թէ՛ Նի-  
նեան լոցան մէջ, ընդդէմ այն դժուարու-  
թեանց և անպատեհութեանց յոռով ե-  
կեալը 'ի Պարանոցէն, որուն պատճառաւ  
հարկ է որ Թէ՛ ճանապարհորդը և Թէ՛ վա-  
ճառը տեղափոխուին: Այս վերջին ամաց  
վեճակարական յայտնի տեղեկութիւնը  
մեզ կը թուուն հաստատուելու, որ ամեն  
տարի միջին հայտով 446 չոգնեալ կը  
մոնան Պարանոցին երկու նաւահանգըս-  
տիցը մէջ, առանց բազմաթիւ առագաս-  
տաւոր նաւերը հաշուելու:

Գետեկերաց հանգամանքն և Կորնթոսի  
Պարանոցին մէջ շնորհ հովիւն մասնա-  
ւորապէս յայտը են, ըստ նկարագրու-  
թեան ամենահմուտ գիտնականաց:

Ուստի ապահով ենք Թէ Համաձայն կը  
գտնուինք մինչև հօս ըսածնեւրոմեա, որ  
նաւաց մեծ մասն՝ որք այժմ՝ ստիպեալ են  
Մաթափանի հրտանդանին առջևէն իրենց  
չըլնալ ընելու, իրենց աւելի լաւ պիտի  
ըլլայ Կորնթոսի ջրանցքէն անցնելու, երբ  
այս նոր հաղորդակցութեան անցքը բա-  
ցուի:

Ի հարկէ այս անցքը պիտի ընտրեն,  
վասնի զի նախ ամենէն կարճն է: Այդիս-  
կանէ 'ի Պիրէոն անցնելու համար, 185 ծո-  
վային մղոնէ աւելի վաստակ ունի, իսկ  
Միջերկրականէ 'ի Պիրէոն 95 մղոն: Եւ յի-  
րաւի, բաւական է որ և իցէ աշխարհա-  
գրական տախտակ մը դիտելն, կը տեսնանք  
որ Մեսսինա և Պիրէոն նոյն լայնութեան  
ստորիճանի վրայ կը գտնուին (այսինքն 380)  
մինչդեռ Մաթափանի հրտանդանն և Չե-  
րկոյ կղզին 360ին վրայ: Արդ Մեսսինայի  
նեղուցէն եկող չոգնեալք ստիպուել են  
380էն 360 իջնալ. յետոյ նորէն դէպ 'ի վր  
380 ուղղուելու, յետ չըջիւյ Մաթափանի  
հրտանդանի քովէն: Մինչդեռ այս նա-  
ւերը Կորնթոսի պարանոցին միջոցով  
պիտի կրնան միշտ նոյն լայնութեան սու-  
տիճանի վրայ նաւարկել, և հրտանդանի  
չըլնէն զերմ պիտի ըլլան, որ յաճախ նա-  
ւարկողաց համար աղետայի է:

Կորնթոսի լրանքին ընծայած օգուտն  
որոշ և աղէկ ըմբռնելու համար, ենթա-  
դրենք վայրկեան մը, որ փոխանակ Մեսսի-  
նայի նեղուցին՝ պարանոց ըլլար, այն ա-  
տեն դիւրին կ'ըլլայ վաճառականութեան  
կրելիք մեծամեծ վաճանքին հաշուել, ստի-  
պեալ ըլլալով այս դէպքին մէջ, ամբողջ  
Միկկիւյ կղզոյն չորս կողմը շրջելու, ճիշդ  
ինչպէս արդի դէպքին մէջ պէտք է ամ-  
բողջ Մորէայի Թերակղզոյն շրջանը կա-  
տարի:

Այս մտածութեանս վրայ կը համարձա-  
կիմ յաւելուլ ևս վիճակագրական ցուցակ  
մը, որ կը ցուցնէ Թէ՛ 4,675,714 վաճառքի  
ստուով ամեն տարի կ'անցնին Կորնթոսի  
պարանոցէն:

Այս վերջի տեսններս Յունաստանի վա-  
ճառականութեան և արուեստականու-  
թեան զարմանալի յառաջագիտութիւնը  
գլխաւորապէս նաւերուն շատութեան մէջ  
կը տեսնուի: Պէտք է յիշել որ Յունաստան  
1850ին, միայն 1050 նաւ, 50,000 տակառա-  
կիրն ունէր: 1871էն սկսեալ մինչև ցարդ  
6,135 հաւ 415,355 տակառ բարձող նաւ  
ունի:

Անտարակոյս անցքի միջոցին կարճու-  
թիւնը շատ մեծ օգուտ ունի նաւարկու-  
թեան ընկերութեանց և ապահով ամեն

ճանապարհորդք և վաճառականք զայն պիտի օրհնեն : Ազրիականէ եկողներուն անցքին համար մէկ ֆրանք տուրք կրնայ դրուիլ, նոյնպէս իւրաքանչիւր տակաւոի, իսկ Միջերկրականէ եկողներուն 50 սան-գիւմ միայն : Ազրիականի մեծամեծ նաւաւ-կութեան ընկերութիւնք այս նիւթիս վրայ խորհրդանշելով, ճիշդ արժանի գտանելով յօժարակամ այս սակն ընդունելին յայտ-նած են : Ուրիշ կողմանէ Ելեմստից գլխաւոր գիտնականք, յետ վիճակագրական ցուցակները քննելու և հարկաւոր պի-տույթը հաշուելու, գտեր են որ այսպիսի քա-ծան սակով մը հանդերձ, 'ի գրաւ դրուած դրամագլուխն ըստ բաւականի չաճ կու տայ :

Յունաստան ճանչնալով Կորնթոսի ջը-րանցքին ուրիշ աղագաց վաճառականու-թեան և իւր յատուկ օգտին համար ունեցած կարողորութիւնը, ապաշուովոց զմեզ օգնելու ըստ ամենայնի յաջողութեան հա-մար ամեն աշխատութեանց :

Կորնթոսի պարանոցն 'ի հնուց 'ի վեր իբրև արգելք վաճառականութեան սե-պուած էր. գողցեն չար ոգիէ մը խափան-արար մը կառուցեալ ընդդէմ մարդկային զօրութեան և կամաց : Եւ յաճախ ցանտ-ցեր են այս խոշընդոտը վերցնել, և իրենց ցանից առաջին լուրերն, որք Մէրիանդը Ան-գուլթին ատենէն, այսինքն 625ին նախ քան զՔրիստոս կը սկսին, մինչև մեզ հասած են :

Աւերողապաշտութիւնն և մերենայից պահպանութիւնը միշտ այս խորհուրդները 'ի գերեւ հանած են : Կորնթոսի քուրմերը վախնալով որ չըլլայ թէ օտարականները առանց 'ի Կորնթոս կենալու և ույց ելլա-լու քաղերին տաճարաց և իրենց ընծաներն նուիրելի՝ ջրանցքէն անցնին, գից միջնոր-դութեամբ ժայռերէ արիւն կը բոլանցնէին, և մի և նոյն ժամանակ պատգամներով զաշխատաւորս կը վախցնէին : Հռովմայե-ցի կայսերը անգամ անկարող եղան ըմբը-նելու այս ձեռնարկը, որուն համար մաս-նաւորապէս աշխատեց էին Կղոգիոս, Կա-լիգուլա և Ներոն : Այս մեծ աշխատութիւնը զարուս էր անաւաղիտութեան համար պա-հուած յոր, զոր զօրողարար մերը կրնանք կոչել : Կը տեսնանք նաև Սուէդի ջրանցքը, որ ապաշուլապէս Հին ատենի կար, և որ անգամ մը գողուցելով թողեալ վիճակին մէջ մնացեր էր : Թէպէտ և երկու զար ա-ռաջ Լուգովիկոս ԺԴի պէս զօրաւոր Թա-գաւոր մը և իւր երևելի պաշտօնեայն Փու-պէր, այս ջրանցքին վաճառականութեան ընծայելիք մեծ օգուտը տեսնալով և 'ի մասնաւորի Քաղլիոյ, մեծապէս փանայցեր

էին դայն 'ի գործ դնելու : Սակայն Սուէ-զի անցքը բանալու համար՝ Լէսերսի պէս հանճարեղ և հաստատամիտ մարդ մը կարեւոր էր, որ իր նպատակէն ամենևին ետ չչենալով, յաջողեցաւ վերջնապէս յաղ-թելու ամեն արգելիքի, Եւ գիտեցէք, ով Պարոնայք - ամենակարեւոր գիտողութիւն մ'ալ -, որ իրեն դէմ արգելքներն ոչ 'ի բնութենէ էին, զոր Լէսերս շատոնց 'ի վեր հնադանդեցնելու վարձեցուցեր էր, այլ 'ի տգէտ, անհատ և 'ի նախանձոտ մարդկանէ, Յաճախ իւր հաստատամիտ-թիւնը թշնամեաց չար կամաց յաղթեց և 1871ին Անվերսայի աշխարհագրական Ա ժողովոյն մէջ, Քէսերս կրցաւ ծանուցա-նել իր քովի գիտնականաց, որ Սուէզի ջրանցքը յայսմ հետէ 'ի գլուխ ելեալ խնդրի մ'էր :

Բարիդոն (1875) Բ աշխարհագրական ժողովոյն մէջ, միջովկիական մեծ ջրանց-քին յատակագիծները քննուեցան, սա-կայն առանց գծին ընարուութեան վրայ միա-բանելու : Այն միջոցին մէջ էր, որ են խըն-դրեցի այս պարանոցին բացման հրամանը և քանի մը մտերմացս հետ միահաւան եր-կիրը քննելու համար՝ երկու խուզարկու-թիւնք զրկեցինք Լիսիէն Պոնաբարդի և Ուայցի հրամանաց ներքև : - Շնորհիւք ա-մենաճիշդ խորհրդոց և հաստատ օգնու-թեանն Լէսերսի, որ քիչ վերջը այս ձեռն-արկութեան ինքնին գլուխ կեցաւ : Իւր իսկ բերելէն այսոր լսեցինք, որ ջրանցքը ամե-նայն կերպով կը յառաջ և յաջողութիւնը ամենապաշտով է :

Արդ Գ ժողովոյն ներկայանալովս, եր-ջանից կը համարիմ կարենալ ըսելու որ ծովային երրորդ արգելիքն բացման հա-մար ձեռնարկած ենք, այսինքն Կորնթոսի պարանոցին, և թէ արդէն ամենայն քննու-թիւնք 'ի գլուխ ելեալ են և քիչ ատենէն պիտի սկսուին բացման աշխատութիւնքն :

Աշխարհագրութեան ընկերութիւնը միշտ վեհանձն նեցուկ մ'եղած են ամեն մեծ աշխատութեանց հաղորդակցութիւնը գիւրացնելով, ինչպէս անձանթ աշխարհ-հաց քննութեան գնացողներուն : Այս ան-գամ միանալով Մարտիոյ Բոլոյի հայրենեաց մէջ, չենք կրնար չզգալ, ով Պարոնայք, այս յանգուգն և հանճարեղ նաւարկոյին յի-շատակը, որ այնպիսի զարու մէջ յորում հաղորդակցութիւնք գծուարացոյն և վը-տանդաւոր էին, իւր զարմանալի քննա-դատութիւնը կատարեց, և զանոնք այն-պիսի պարզ և կատարեալ կերպով մը նկա-րագրեց, որ իւր գիրքը կրնա ծառայի՝ նոյն իսկ այսօր, իբրև յառաջաբան մը ա-

րեւելեան և Միջին Ասիոյ քննութեանց համար: Ըստ չինական աւանդութեան մը, ժողովուրդն 'ի նշան երախտագիտութեան հաւանեցաւ զնիւ Մարգոյ Բոլոյի արձանը 'ի տոճարին Հինգ հարիւր Ազոյ Գանդոնի, և այն վաճառականութեան մեծ կեդրոնին մէջ յարգուած է ամեն ցեղերէ:

Մարգոյ Բոլոյ այսպէս մեղ նշանակած է, ով տարբ, մեր նպատակը. այսինքն մեր քննագատութիւնը 'ի բարին գործածել, օգնելու մեր գիտութեամբը այն ամեն ժողովրդոց որք նուազ գիտուն և քաղաքակիրթ են և անով զմեզ անոնց սիրել տուլու: Ընդհանուր բոլոր այն ժողովուրդները իրարու մօտեցընել, և իմշպէս մեր գահէրէցքն Ֆերտինանտ տը Լէսեբս և Թէտնոյի իշխանը շատ աղէկ ըսին, ջնջել երկրիս վրայէն բարբարոսութեան Հետքը: Գիտնականը զերկիրս յերկու կը բաժնեն, բուսականը և կենդանիք, Չանանը, ով տեարք, զանոնք համոզել որ կայ մէկ ուրիշ բաժանում մ'ալ բոլորովին տարբեր, և այս է մարգկային ցեղն:

\* \*

Թուրքի ճառախօսութիւնը բազում անգամ ծախահարութեանց շառաչներով ընդհատուեցաւ, և մասնաւորապէս երբ Լէսեբսի ըրած մեծագործութեանցը վրայ խօսեցաւ:

Յետոյ Նախդիկալ Նախագահն ճառելու

## ԸՆԴՀԱՆՈՐ Ա. Կ ԱՆ ՆԻՍՏ

19 Սեպտեմբեր.

Նիսան կը բացուի ժամը 3,20ին: Թէանոյի իշխանն կը հաղորդէ ժողովրին որ Պ. Լեսեբս այս ժողովքին զլիաւոր ընտրուեր էր, բայց ստիպուելով յանկարծակի քաղաքէս մեկնել, կ'առաջարկէ որ իր տեղը ընտրուի զընդապետ Կոման Ֆրանչիսկան Գոէլլոյ, Մարտիտի Աշխարհագրական Ընկերութեան Նախագահն: — Միաձայնութեամբ այս ընտրութիւնն ընդունուեցաւ:

Գնդապետը Նախագահութեան գահը անցնելով, գաղղիարէն լեզուաւ շնորհակալ կ'ըլլայ Լեսեբսի յաջորդելու պատուոյն զանձն անարժան համարելով. և յետոյ իր լեզուաւ կ'աւելցնէ, որ

հրաւիրեց գյարդոյ առաջնորդն պարանոցներու բացմանց:

Լէսեբս սկսաւ խօսքը երիտասարդական աշխուժով մը: Սուէգի պարանոցին բացման վրայ խօսելով, եռանդուն գովում թեամբը յիշեց զհանգուցեայն Բալէօզարա, որ իւր ուսմամբը Սուէգի ջրանցքին բացումն կարելի ըրաւ: — Յիշեց իւր կտառ վարութեան մի հեռագիրն՝ որով շնորհակալ կ'ըլլար Խոալիոյ իւր ներկայացուցացը ցուցած սերտ ընդունելութեանը համար. համառօտ մը յիշեց երկուց սոգաց վաճառականութեան գաշինքը, որ հիմա կ'նքուելու վրայ էր: Յայտնեց որ Պաղղիա և Խոալիա պարտ էին միացեալ ըլլալ քաղաքակրթական նպատակի մէջ, որ զինուց տեղ գիտութիւնը կը փոխանակէ. Բանամայի պարանոցին և արդի ձեռնարկեալ աշխատութեանց վրայ խօսեցաւ, և իւր այս յանկարծական ճառախօսութիւնն այնչափ մեծ ազդեցութիւն ունեցաւ, որ ամենքն միաբան ծափահարութեամբ զայն ժողովոյն ամենաճարտար և սիրելի ճարտասանը ցուցին:

Յետ յազմանց հանգարտելուն, առաջ արկուեցաւ ամենայն ճգամբ ջանալու 'ի յառաջագիմութիւն Կորնթոսի պարանոցին բացման աշխատութեանց: Յետ առաջ արկութեան ընդունուելուն, Նախդիկալ Նախագահը ծանոյց որ օրուան առաջ արկութիւնը լմնցեր էին, և Նիստը վերացուեցաւ:

Սպանիա և Խոալիա կրնան հաւասարապէս պարծիլ Քրիստափոր Գոլումպոսի համար, վասն զի մեկը իրեն ծընունդ տուաւ, և միւսն իրեն մեծ գիւտին միջոցները:

Յետոյ խօսքը գաղղիարէն լեզուաւ շարունակելով՝ ժողովքին բացումը հրապարակեց:

Ընդհանուր առեմնադպիրը Պ. Տալլա վետովա կ'ընթեռնու բացման վերաբերեալ բանախօսութիւնքը, որոնք կը հաստատուէին:

Նախագահը կը հրաւիրէ Ա. Խումբին ճարտարախօսը, որ ընթեռնու իրենց առանձնական ժողովոյն բանախօսութիւնքն, և ասիկայ Նախագահու:

թեան կ'առաջարկէ որ խտալական ար-  
պադրութեան յանձնուի Աշխարհա-  
գրական հեռագրական երկայնութեանց  
տարբերութիւնքը ժողովելու :

Առաջարկութիւնն ընդունուելէն ետ-  
քը, երկրորդ, երրորդ և չորրորդ խում-  
բին պատմողք՝ որոշողութիւնները կը  
կարդան : Զորրորդին պատմողն՝ առաջ-  
արկութիւն մը կը ներկայացնէ, նախ-  
քան զպատմութիւն խտալական եղած  
յիշատակարանները հրատարակուելու  
վերաբերեալ, 'ի բաց առեալ կողմացող :

Այս փափաքն ալ հաստատուելէն  
ետքը, հինգերորդ և վեցերորդ խում-  
բերուն որոշողութիւններն կը կարող-  
ցուին : Վեցերորդը կ'առաջարկէր չա-  
նալու որ արդէն կ'ազմուած ընկերու-  
թեանց մէջ Աշխարհագրական ընկե-  
րութիւնք ալ հաստատուին կամ գո-  
նեայ վաճառականական բաժանմունք-  
ներ : Այս առաջարկութիւնը մեծ հա-  
կաճառութեան պատճառ եղաւ, յորում  
խօսեցան զանազան ճարտասաններ, և  
վերջապէս առաջարկը վեցերորդ խում-  
բին զրկուեցաւ նորէն զայն ձևակերպե-  
լու համար :

Յետոյ կը կարդացուին եօթներորդ և  
ութերորդ խումբին առաջարկութիւն-  
ները : Եւ ետքը նախագահը կը հրա-  
ւիրէ զՔրիստափոր Նեկրի խօսելու : Ա-  
սիկայ կ'առաջարկէ որ ժողովքը շնոր-  
հակալ ըլլայ Պեյճիոյ Լեոքոյոյ Բ թա-  
գաւորին, իրեն ժողովքին համար ը-  
րած արդինատուր պաշտպանութեանը  
համար, և առաջարկը մեծ ծափահա-  
րութեամբ կ'ընդունուի :

Միափառութիւնը լմննալէն վերջը,  
կ'առաջարկէ որ նոյնպէս շնորհակալու-  
թիւն ըլլցուի բեւեռական հիւսիսային  
արշաւանաց Մեկենաններուն, նոյնպէս  
այս ալ ծափահարութեամբ կ'ընդու-  
նուի :

Անվերստոյի Աշխարհագրական ընկե-  
րութեան նախագահն շնորհակալ կ'ըլ-  
լայ մեծապատիւ Նեկրիի և ժողովքին,

և կ'ըսէ որ հեռագրիւ է առ թագա-  
ւորն այս որոշողութիւնը, որ անշուշտ  
մեծապէս ուրախացած պիտի ըլլայ, և  
անտարակոյս անձամբ պատասխան կու-  
տայ :

Ուսուցչին վամպերի հունգարիոյ Աշ-  
խարհագրական ընկերութեան փոխա-  
նակ-գահերէյը, ժողովքին կ'առաջար-  
կէ Նեկրիին համար ծափահարութիւն  
մ'ընել, և զայս կ'առաջարկէ վասն զի  
Մաճառատան ոչ միայն իտալիոյ մե-  
ծութիւնը և միութիւնը կ'ուզէ, հապա  
նաև իրեն փառքը : Մեծ ծափահարու-  
թեամբ ընդունուեցաւ Մաճառ նուի-  
րակին վեհանձն խօսքերը : Նախագահը  
կը հրաւիրէ զՅ. Մ. Մանիակի ասպետն,  
հրամանատար պատերազմական եր-  
կրորդակարդ նաւուց, Տեսուչ Ճենո-  
վայի պետական նաւարանին ջրաբաշ-  
խական գործատան, հրամանատար  
Ուոլինկթընի, վերջի Միջերկրականի  
ուսումնական արշաւանքին մէջ, իրեն  
գիտողութիւնքը պատմելու :

Իրեն ընթերցմունքն ալ ծափահա-  
րութեամբ լմննալէն վերջը, Գոէլլը նա-  
խագահը, Ճիլիոյի ուսուցչին կը հար-  
ցնէ, որ էր խտալական արշաւանքին  
ուսումնական մասին գլխաւորն, թէ  
ուշ ըլլալով կ'ուզէր իր ընթերցումն ա-  
ռաջիկայ նիստին թողուլ :

Մակայն Ճիլիոյի ուսուցչին, աւսում-  
նականներէն հրաւիրեալ, համառօտիւ  
իրեն ամենակարևոր գիտողութիւնքը  
կը բացայայտէ :

Միափառութեամբ այս ալ ընդու-  
նուելէն ետքը, կը խօսին նաև Լոնտրայի  
թագաւորական ընկերութեան նախա-  
գահը, Ֆերրերոյ գնդապետը և Պ. Ֆի-  
չըր, որ Գրավայիօր արշաւանքին մաս-  
նակից էր, և խօսեցաւ ենթածովեան  
փաւնային վրայ . յետոյ նախագահը  
հրամայեց որ ժողովքը գոցուի :

# ԵՐԹ ԺՈՂՈՎԱԿԱՆՍՅ Ի ԲՍՏՈՒՄ.

20 Սեպտեմբեր.

Երկու հարիւր ժողովականք երէկ զընացին Բատուա մասնաւոր շողեկառօք. մեկնեցան ժամը 9 1/2ին, 10,20ին Բատուա հասան. Ի կայարանը զիրենք ընդունելու եկած էր քաղքին շահապը Դոլմէի ասպետն, միաբանութեամբ ոստիկանութեան ատենակալաց և այս հանդիսից համար Բանձնաժողովոյն:

Յիսուէն աւելի կառք պատրաստ կային զիրենք քաղաք տանելու համար: Քաղաքը դրօշակներով զարդարուած էր, և երևելի հիւրերը ծափահարութեամբ ընդունեցան: Համալսարանի մեծ սրահին մէջ, ուր ամենէն առաջ գնացին, ընդունուեցան մեծապատիւ Տեսչէն, որ էր Մորթուրիոյ ասպետն, ինչպէս նաև յուսուցչաց և աշակերտաց նուիրակութենէ մը: Նախ շահապն, Դոլմէի ասպետն իրենց դարուստը ողջունեց յանուն Բատուա քաղքին: Յետոյ ճարտարահիւս Բանախօսութիւն մ'ըրաւ Տեսուչն, յիշելով Բատուայի համալսարանին չքեղ անցեալը, և անոր ամեն տեսակ ուսմանց մէջ արդիւնները, և լինցուց Գալիլէոսի անունովը որ անկորուստ փառք մ'է Խտալիոյ: Մեծ ծափահարութեամբ ընդունելի եղան թէ Տեսչին և թէ Դոլմէի ասպետին ճառախօսութիւնքն: Միտուն մտածութեամբ մը ժողովքին նախագահը, Թէանոյի իշխանը, ուղեց որ երկու մեծապատիւ անձանց պատասխանը տայ Քրիստափոր Նեկրի ասպետն, Իտալական Սչիսարհագրական Ընկեթութեան հիմնադիրն և որ 1848ին Յեղափոխութեան ժամանակ, Բատուայի համալսարանին ուսուցիչ էր, և այն նշանաւոր տարւոյն պատահած դէպքերուն շատին մասնակից:

Մեծապատիւ ծերոյն գեղեցիկ և սրը.

տաշարժ ճառը զանազան անգամ ծափահարութեան պատճառ եղաւ և շարժեց ամեն ազնուական սիրտ: Ուսումնական հանդէսը լմնալէն վերջը, սրահ մը անցան, ուր փառաւոր խնջոյք մը պատրաստուած էր իրենց:

Ժողովականք այսպիսի փառաւոր ընդունելութեան իրենց շնորհակալութիւնը յայտնելու համար, գաղղիացի դորժակատարներուն մէկուն՝ Պ. Դիւլլէյի, և Պ. Ֆրիերսի որդւոյ Հիւպատի և դորժակալի Գերմանիոյ՝ առաջարկութեամբ, հօն ամենքէն Բատուայի աղքատաց համար փոքրիկ հաւաքմունք մ'ըրին և 4300 ֆրանքէն աւելի ստակ ժողովեցաւ:

Յետոյ այց ելան զխաւոր յիշատակարանաց, յորս մանաւանդ հռովմէական նոր ամփիթէատրոնին, որ արդեամբք Դոլմէիի՝ Արենա հրապարակին մէջ գտնուեցաւ. և յետ բաշխելու իրենց անոր վերաբերեալ Դոլմէիի յօրինեալ հմուտ և գեղեցիկ երկասիրութիւն մը, ժողովականք երեկոյեան 5ին կայարան գնացին, ուր դարձեալ նորոգելով շնորհակալութիւններ և բարեմաղթութիւնները առ Բատուա քաղաքը և իրեն արժանաւոր ներկայացուցիչքը, որ այնչափ չքեղութեամբ և պատուով ընդունեն էին զիրենք, ի վննատիկ դարձան:

Բատուա գնացող ժողովականաց մէջ բաց ի Թէանոյի իշխանէն յիշեց դարձեալ վննեակոյ շահապը, ընդհանուր ժողովքին ատենադպիրն Տեյլա վետովա ասպետը, հռչականունքն Լըվասէօր, Տրադէ, և այլն, ինչպէս նաև Չեզարէ Գանդու և Մասսարի՝ յՄփրիկէէ նոր դարձած ճանապարհորդն, որ ամեն կողմ չքեղ ընդունելութիւն գտաւ:

ՀԱՅԻ ՔՐԻՍՏՈՒԹՈՐ ՆԵԿՐԻ ԱՍՊԵՏԻ

Ոչ ինձի, այլ աշխարհադրական ընկերութեան բուն նախագահին, իմ մեծարդ բարեկամիս տեսուն թէսնոյի իշխանին կը պատշաճի շնորհակալ ըլլալու պատիւն՝ քաջանուն Սինդիկոսին, մեծապատիւ Ուղղին, քաղաքին, Աթէնէոյին, որոնք ցնծալից զմեզ կ'ընդունին։ Այլ ինչպէս իշխանն ազնուական զարմէ է, նոյնպէս նաև նուրբ և ազնուաբարոյ է։ Ինքն արդոյ համարեցաւ իմ կրած յուզումս այս դահլճին մէջ և վարձատրեց գլխաւոր մարտակը ծածկելով, երկայն ժամանակաց յիշատակքը և սիրելութիւնքը։

Ինչպիսի զգացումներ կը կրեմ ես։ Իմ գաղափարքս կը խռնին, կը խտանան, կը չփոխին, սակայն ներքեցէ դուք իմ ոգւոյս ամբոխմանը։ Արդէն քառասուն տարիներ անցան գնացին երբոր առաջին անգամ այս գիտնական տաճարին մէջ մտայ, ուր փայլեցին ատենակալք, քաղաքագէտք և իմաստասէրք, որոց անուան առջև պատկառանք կը խոնարհին դարք։ Բոլոր աշխարհի քաղաքացիք, ամենայն ժամանակաց ժամանակակիցք։

Ուրեմն ես կը վախնայի, և ետ կը կենայի։ Այն ատեն զիս կը քայլաւորէին գիտութեամբ և առաքինութեամբ պանչելի ձեր երկու քաղաքացիքն. դեռ իրենց ձայնն իմ սրտիս մէջ կը հնչէ։ Մտիկ կ'ընէի Պարպիէրիի ու ժգնահնչակ բարբառոյն մէջ կիկերոնեան հազագին ալիքը, գոչիւնը և փոթորիկը. կը լսէի Ջիդգատելլայէն վայելութեամբ և շնորհօք Վիրդիլեան փափկութեան լեզու մը, Ունեցայ անոնցմէ խրատ և նպաստ բանի և գաղափարաց, և գտայ 'ի նոսա և սրտի գեղման մէջ՝ իմ մտացս ազատութեան թիւրին լեցընելու նիւթ։

Ջերմ սիրով սիրեցի գերիտասարդութիւնն, յարգեցի զայն։ Կը մտածէի որ ամենայն ծառ, որչափ որ վսեմ ըլլայ, երկրէս ելած է, և փոքրկանց և աղքատաց մէջ շատ անգամ իմացակա-

նութեամբ լոյսերն աւելի առողջ դուրս կ'երևան. կը յիշէի որ ինչուան Գալիտոնիոյ անտառներէն, յանկարծակի և միայն Հոմերոսի նախանձորք մ'երևցաւ։ Եւ երիտասարդութիւնն զիս սիրեց, և ես 'ի ծերութեան անոր քաղցրութիւնը կ'իմանամ։

Երբոր մարտի մէջ 1848ին մրիկն ելաւ, որ յետ երկար աղետից, բեռնոց մէջ տեղ Աստուծոյ ժպիտով զուարճացած գեղեցկագոյն երկրին պարգեւեց անկախութիւն և միութիւն, ես յանդգնեցայ ճիշդ այս ատենին մէջ նախ առաջին դրոշմ ակադեմական խումբը՝ հռչակելու հայրենեաց ազատութիւնն, և ասկէ շարժեցայ երիտասարդաց քաջասիրտ գնդով մեծ Դահլճին համալսարանական վաչոր յօրինելու, որ պահեց 'ի Սորիօ արեամբ հայրենիքը պաշտպանելու երդումը։

Պանդխտելով 'ի Սարտենիա, իտալական դուաւիցութեան աշխատութեց տոկացի քսան տարի այն գլխոց տակ, որոց անուանքը փառաց տաճարին մէջ գրուած են. այլ միշտ մնաց յիս այս սիրելի քաղաքիս յիշատակն, ինչպէս նուագարանի ներդաշնակութիւն մը՝ յետ դադրելու 'ի զարնուել։

Եւ հիմա ինչպիսի փոփոխութիւն։ Նորէն կը խօսիմ այս ատենին մէջ երկրագնդիս ամեն կողմերէ գլխող ճաշապարտորդաց և հմտից ընտրելագոյն խմբի մը դիմաց, որք աներկիւղ առ ոչինչ համարեցան արևադարձային ճահճաց ապականիլ ժանտահոտութիւնքը, և արեգական մը զոյրոյթը՝ որ ոչ թէ ճառագայթներ կը հոսէ, այլ հրեղէն սլաքներ գլխոյ վրայ, զորս ոչ զարհուրեցուցին ոչ ժանիք յովազու, ոչ եղջերիկ օձի թոյնն, ոչ բռնաւորաց սուրն, ոչ բեռնոյ գիշերքն, ոչ ոգորող սառից խեղձութիւնն։ Շրջապատեալ եմ մարդիկ ներով որ երկրագնդին ստեղծումը տեղեկութեամբք աւելի մեծացուցին, որ նաւական և երկրային աշխարհագիտո-

ղութեանց փառաւորագոյն զիւցաղներ գութիւնը գրեցին, որ հետագոտեցին զորպէսն և զորքանն 'ի բնութեան և 'ի պատահարս իւր. մարդիկներով, որովք հիմայ Ամերիկա կը ցոյցընէ խորպիոյ վրայ լոյսեր՝ որ 'ի մէջ փոխանակեցան. անոնցմէ՝ որ հանեցին զգէօտիկը մինչև 21,000 ոտք բարձրութեան ծովուն վրայ, և ուրիշներէն՝ որ ուր պատմութիւնը կանկ 'ի առնուամենահին ժա մանակաց նսեմաստուեր անդնդոյն գիմաց, խորպիոյ գնելով գերեզմանաց մէջ, յիշատակարանաց մէջ, կոթողաց մէջ, անցեալ գնացեալ ժամանակաց գաղտնի յորինուածն իմացան, և մեռեալ ընկերութեանց կերպարանքը կազմակերպեցին: Եւ 'ի քեզ, սիրելագոյնդ Պեհրիս, կը տեսնեմ աշխարհագրաց Լըվէրիէն, որ սրելով հանճարը քաջատես հետազոտութեանց ճեղքուածի մէջէն, Գոնկոյի ստոյգ աղբերակունքը և ընթացքը գուշակցիր, քանի որ դեռ Սգանլէյ իր քաջայան զուգն քայլովն չէր ընթացեր: 'ի քեզ, 'ի Քադրըֆօծ, 'ի Քիբէրէ, 'ի Մոնուար, 'ի Տալի, յայն ամեն մարդկանց համաստեղութիւնը որ հօս վազեր են մինչև 'ի հակոսանայց, 'ի հրաւէր գիտութեան, և յայսպիսի մեծ հրաւեր վենետիկոյ, որ խորհրդածու հանճարով կամ գիմագրաւ խուզարկութեամբք, կամ բնկերական առաքինութեան արդեամբ, գերափայլ լուսով հորիզոնը կը պայծառացընեն, կ'ողջունեմ ես գիտութեան գրօշակակիրներն. ջնոյն 'ի ձեզ կ'ողջունեմ Պիւրդըն, Ռօլֆս, Նախգեկալ, Եվայնֆուրթ, Քամերոն, Ռիխթհոֆէն, մոտեմագոյն բարեկամք իմ. գիտութիւնը չունեցաւ աւելի հզօրագոյն ախոյեաններ, և ոչ ձեզմէ լաւագոյն հմայք, կամ աւելի քաջ առաջնորդքան զմեծարոյն Լէսեքս, որ միայն մարդուս բարեաց համար այնչափ գործեց՝ որչափ պատմութեան գերահռչակ զիւցաղունքը չարիք չեն ըրած:

Եւ գուր հիմայ ձեր խրախուսիչ ներկայութեամբը կը պատուէր իտալական խորխտապանծ, բարգաւաճ, նորածին

առաքինութիւնը. կը ծափոհարէք մեր շարժումը, զուարթամտութիւնը, խրախուսանքը. վասն զի արժանաւոր խրախուսանք է մերն, որ կը պանծանք այսպիսի մեծ նախնեզը, ցասմնոտը՝ երկրորդ ըլլալու մտածութեանց և գործոց մէջ. յանին գծարարութեանց կը արեւը յանդգնութիւնը, և ճշմարիտ ազգային ոգւով կը փնտռենք ժողովոյն մէջ խաւրական սկզբնական գործօնեութեան միարանութիւնն՝ այրական և հասուն օտար աշարջութեան հետ:

Այլ ինչու հօս ինծի տրուած չէ տեւնելու ոչ զճեօտի, ոչ զճիւլէզդի, ոչ զԳիարինի. և ոչ գրեզ գրկել, իմա Մագէուչի, զոր 'ի մեկնելէ սեղմեցի կըրկին զրկածութեամբ 'ի լանիս իմ: Ո՛հ, շատ իսկ անգութ է գիտութիւնն: Այնպէս եղաւ ամեն ժամանակ, և այնպէս ամեն կլիմայից տակ: Դեռ կ'արհնոտէ սիրտս մտածելով զԿարնիէ և զվէյրքիտը, զոր այնչափ սիրեցի, փոխարէն սիրեալ: Այլ 'ի վեր քան զամենայն հին և մեր ժամանակներն անգութն՝ ափրիկեան գիտութիւնն է: Այնպէս եղած էր Անգլիացւոց և Գերմանացւոց հետ. յիտոյ եղաւ անողորմագոյն Պեռլիացւոց և Գաղղիացւոց հետ, հիմայ զարկաւ նաև գլխալիա կարծր մրճոյ շատ հարուածներով: Ո՛հ, աշխարհագրական ընկերութեանց տրուած միտաշնորհ չեն միայն շանակիչը յաղթական գիւտից, կան նաև գերեզմանք որ կը նշանեն, մանաւանդ յԱփրիկէ, իբրև սահմանափէմ սիւնը, մարդկութեան այսպէս շատ անգամ ցաւալից, սգաւոր ճամբան, Հաղիթէ, իմա Մագէուչի, քու աշնուական ընկերոջ Մասսարիի հետ՝ տիւր, բայց աներկիւզ հայեցուած մը ձգեր էիր 'ի կուխնէա Պելցոնիի գերեզմանին վրայ, այն Պելցոնիին, զոր ուրիշ բաներու հետ յիշեցուցի քեզի, պատուիրելով մեծամեծ զգուշութիւններ, զոր ես իմ մանկութեանս ժամանակ հիացմամբ տեսեր էի իրեն արևելեան տորադովն բուր գուարթամտութեանն և գեղեցկութեան մէջ, ինքն 'ի Դոմպոզդու մեկնե:



լու դրից մէջ հոչակաւոր լսնկիի գիմաց նստաւ պատկերին համար: Աւաջ գնացի, հասար նպատակին. մենք սարդեն նին կը պատրաստէինք, և արգէն կ'ինկ. նայիր կորսուած գիտութեան, իտալիոյ, քոյրոց, և քու խղիւղամանք, քու փառացի ընկերը կը թողուի ամայութեան և սգոյ մէջ: Այլ ոչ քեզի համար, ոչ վոկելի համար, Դին տիկնոջ համար, Պէօրմանի համար, ոչ ուրիշ չառ մեծանձն զոհից համար, նշանուած է սիրոյ, համբաւոյ, անսպառ գիծն՝ որ կ'անջատէ գերկիր յերկնից:

Սակայն 'ի վաղուց գերեզմանին մէջ թաւալած զոհ մը ազատեցիր դու, ով Պիանքի: Քեզ պատիւ, որ 'ի Հապէշտատան ազատեալ քաղաքացւոյ ալ պատկն ստացար. պատիւ քեզ որ համատուութեամբ կ'անգիտանաս զայն զոր հօս ամենքն գիտեն, քու բուն արժէքդ. և սակայն անհանգիստ կ'անձկաս նոր փորձերու, և ձայնով և գրուածքով կ'ուզես 'ի սոսկականաց, 'ի Տէրութեանէ՞ գէնքեր և նշանն խոյանալու ուրիշ անմատոյց երկիրներու հետազոտութեանց:

Այլ յիշատակաց և սրտի մղումը, և ընդ քեզ խօսակցելու քաղցրութիւնն, իմ խօսքերս չափազանց կերպով կ'երկնցընեն: Նորէն շնորհակալ կ'ըլլամ, յանուն ժողովոյն և Նախագահ իշխանին, յանձինս Սինդիկոսի, և վարչին այս քաղաքիս: Շնորհակալ կ'ըլլամ նաև ես ինքնս, ձեզ արժանաւորագոյն ունկնդրաց ամենեցուն, որ բարեբարոյ լսելութեամբ վարձատրեցիք իմ խօսքս, և ինչ արժանիք յիս. ամենայն ուսմանց միայն սէրն, մասնաւորաբար աշխարհագրականաց, Ձեզի համար:

Ներշնչմանց և եռանդեանց հասակէն սկսեալ՝ երկրի ուսման մէջ անժանութէն ես միշտ սոսկումն ունեցայ, ինչպէս հին բնագէտք սոսկումն ունէին դատարկութենէն. և որչափ կարողացայ, քառասուն տարի առաջ շնչեցի զայն այս Աթէնէդիս մէջ իտալական երիտասարդութեան: Այլ այն ատեն

աշխարհագրութիւնն ամայի և ցածուն էր. և ինչպիսի էին, ոհ, խաղաղական դպրոցաց մէջ գործածած գրեանքն: Ո՛ր տայր թէ յերկնից կրակ ի՞նչէր, կ'ըսէի, և զայն բոլոր այրէր, և ոհ, թէ Սամսոն ըլլայի անոնց հեղինակները վարձատրելու անուանի ծնօտողն: Ուր ուրեմն թէպէտ ուշ, կրակը եկաւ, և այլ պէտք չկայ Սամսոնի: Գեղեցիկ աշխարհագրական Հանդէսն, որուն համար մեծապէս պէտք է գովենք վենետկոյ բնկերութիւնը, լիովին կը հաւատարմացնէ:

Քիչ ատենէն իմ ձայնս պիտի լռէ յաւիտեան, և յերկրի ամենայն յիշատակ դադրի պիտի յինէն. այլ ապրեցայ մինչև ովսաննային օրը, և յօգնութիւն կոչած գիտութիւնը կը յաղթանակէ յիտալիս, ինչպէս կը յաղթանակէ յաշխարհի: Երկու խառնուածք մէջ յիսուն աշխարհագրական լնկերութենէն աւելի ելան. քիչ քիչ սկըսան, զունդագունդ աճեցան, և լեզուէն կը կազմուին, և լեզուէն է մերն. աւելի երիտասարդագոյն մը մեր քովը զմեզ կը տագնապէս, և կը կուրի ընդ մեզ գերախայութեամբ. ծափահարենք, այլ հակելով որ քան զմեզ չյառաջէ: Այլ ես չեն նահանջեցընէր խուզարկութիւնը՝ ոչ քաջաց օրհասն, ոչ աւագից անապատքն, ոչ սառից կրճիւրն, ոչ ծովուց հեռաւորութիւնն. մեր գիտութիւնը կը խուժէ և կ'աշխարհակալէ, ամենայն գիտութեանց կ'ընկերէ, և ամենեցուն կը փոխարինէ, և կը ստեղծէ իր ծոցէն աւելի երիտասարդագոյն գիտութիւնը, ընդովիտանակաւն, որ տնայալի զարմանալի առաջարկներ կը լուծէ և այնչափ նորեր կը զարթուցանէ:

Անուանին Տալի իր առ ամբրիկեան բնկերութիւնը գեղեցիկ ճառից մէջ, երկու տարի կայ, որ կը համբէր նոյն ժամանակը 22 ուսումնական խուզարկութիւններէն աւելի յԱմբրիկայ, 32 յԱփրիկէ, 38 յԱսիա, և հիմայ թերևս աւելի են: Իցիւ թէ յաւիտեան տիւրէր յամենեսին այն ոգին՝ որ Պեճիա-

ցոց Լէորոտոսի Բ վիհափառութիւնը՝ ազդեց այն ընկերութեան, որուն առաջնորդն է, այսինքն է կոչելու զմարդն ՚ի բաւադոյն վիճակ, այսպիսի գեղեցիկ արարած մը, որուն, Ս. Գիրքը կ'ըսէ, թէ Աստուած ինքնին հաճեցաւ: Տէր Աստուած պահէ անոր մեծարոյ կեանքը:

Խալիլոյ արքայական դրօշն արդէն վեց անգամ պատեց զերկիր, Թագաւորին և իշխանաց օգոստափառ աշուանքն հիւսիսային և աստորայեան երկիրներուն մէջ գրուած են. Նորոնես, քեօլտի արդոնաւորդաց հետ եղանք, Պովէ նաւարկեց զէպ ՚ի Հիւսիսոյ սառնական կոհակը, և Պրացցա Ալիմայէն և Գոնքոյէն փառալից կը սպասէ. յափեցինք 4000 մեղրէն ասելի մեր ծովը:

կը համարձակիմ ըսելու զայն, գտանք մեր Սիկիլիան. վասն զի ճանչնալ մը չէր այն որչափ որ կը ճանչնայինք զՆոտոլիա կամ զՆուպիա. գաղաթնահալեցութեան և ընդարձակութեան այսպիսի սխալներ մեր կողմէն ներսը պէտք եղաւ որ սրբադրենք:

Ուրեմն Խալիլա, ո՛ տեսարք, ուրիշ ազդաց ալ վերջապահ չէ, նաև մեր զիտութեան մէջ անոնց ընկեր եղած է, և սրտապինդ զնդով անոնց հետ կ'ընթանայ: Քաղաքական հարուածներն իր շարժումը կեցուցեր էին, այլ չնուաղեցաւ և չմաշեցաւ, հիմա դրդուեցաւ, և

Երկրորդ կենաց

Հզօր շունչն առաւ:

## ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆՒՍՏ

### 21 Սկստեմք:

Ժամը 3,15ին բացուեցաւ Նիստը, Ուղղորմանս գնդապետին գահերիցու թեամբը, որ ՚ի մեծ ծափահարութիւն ամենեցուն՝ խօսեցաւ հետեւեալ ճառը:

### Տեսարք,

Այս աթոռոյս վրայ նստած, չեմ կրնար ծածկել որ ինչ մեծ պատիւ է ինձ յաջորդելու Աշխարհագրական Գիտութեան ամենէն հոյակապ հանձարներուն, նախ Նախգիկալի՝ հռչականուն աշխարհագիրին, Պ. Լէսեռաի՝ աննման ճարտարապետին, մեծանուն Գոէլլոյ գնդապետին՝ Սպանիոյ Աշխարհագրական յառաջագիմութեան ամենէն աւելի նպաստողին. և այս պատիւ կ'ունենանք ՚ի յիշատակ 1871ին Անվերսալի համաժողովին աշխարհագրական ժողովոյն:

Չեմ խոյս տար գիմացս հանդիպած մեծ պատասխանատուութենէն. վասն զի վստահ եմ այն մեծ բարեսրտութեան վրայ՝ զոր բարեբաղդաբար գտայ ՚ի Ձեզ. և ուրախ եմ հաւատաւելու ՚ի պատիւ իմ սիրեցեալ հայրենեայս՝ ինչ որ հօն երբեմն դործուեցաւ:

Յիրուի յանգուզն գործ մ'էր, տեսարք, որ վաճառականական աշխատութեանց զբաղեալ քաղաք մը համարձակի աշխարհքիս ամենէն գիտնականքը հրաիրելու: Շատ անձինք մեզ անյաջողութիւն կը գուշակէին, և յիւրաի որքան դժուար էր յետ այնպիսի մեծ արկածից՝ որ վրդովեց զԵւրոպէ ողջոյն, միացընել բոլոր բարեկամներն, որ թէպէտ մեզ հաւասարապէս սիրելիք, բայց, աւաղ, իրենք մէջերնին բաժանեալ էին: Ձեզ ընծայելով Յլանտրական աղքատին հիւրասիրութիւնը՝ կը յուսայինք որ պատահարաց մէկ մէկէ բաժնած ժողովուրդը, մերձենան մէկ մէկու տեսնալով իմաստուն ազատութեամբ կառավարեալ ժողովուրդ մը: Գիտէինք որ շատերը պենիակն վաճառաշահ քաղաք եկած ժամանակ, մտքերնուն մէջ ունէին նաև պատեւրազմելու խորհուրդ մը, սակայն ուսման սէրը յաղթեց շատ մը կանխակալ կարծեաց և ամեն ազգք փութալով միաբան վաստակելու քաղաքական յառաջագիմութեան համար, հաստատեցին այն միութիւնը որուն համար մենք

այսօր մեծապէս ուրախ ենք : Գործը աղօթքով էինք , սակայն քաջատարութեամբ կատարեցինք այն պաշտօնը՝ զոր նախախնամութիւնը կարծես մեզ յանձնած էր, և սերմը նետուած հիւսիսի ծռվունցուրտ նահանգաց մէջ, բողբոջեալ ուռնացաւ Աղբյուրկանի գլխոյին փայլուն երկնից ներքեւ :

Անվերայի ժողովը արշալոյս մ' եղաւ Աշխարհադրական այն մեծ յառաջագիմութեան որ մեր դարուն յատկութեանց մէկն պիտի ըլլայ, ինչպէս որ Բարիգու 1875ի ժողովը առաջինն է ցուցնելու աշխարհադրական արշաւանաց և խուզարկութեանց մեծ յառաջագիմութիւնը, որոնք մեզի նպաստեցան ճանչնալու երկիրս, և պատճառեցան Բանամայի բացման մեծ ձեռնարկութեան : Տնանալով նոյնպէս հիմայ օգետող խանդը՝ չեմ' կրնար տարակուսիլ որ վեներտկոյ ժողովքն ալ այնպիսի տեսական հետքեր պիտի ձգէ, երբեմն մեր նախնեաց շատերը բաղխած են այս սրահին դուռը՝ վեներտկոյ ահաւոր հասարակապետութեան ծերակուտէն օգնութիւն և պաշտպանութիւն մը խնդրելու : Աղքատ և տգէտ արուեստաւորը, գողացած ձեռքէ խաւիոյ փայլուն արուեստ ճառագայթներէն, իրենց առատօրէն ընդունած հիւրընկալութեան բախտած փոխարէն թողլով արուեստի հրաշակերտներ, զորս սրտի գոհութեամբ դիտեցի ձեր թանգարաններուն մէջ և նորոգեալ գողցես Արուեստին ընծայեալ երկրէն. և ձեր կենակցութեամբ եռանդնացեալ իրենց հայրենիքը դառնալով, կազմեցին Ֆլամանտական մեծ դպրոցը, որ հիմայ մեզի մեծ պարծանք մ' է :

Ես ալ նոյնպէս աղքատ պանդուխտ մը այնպիսի բարձր պատիւներու սահմանեալ չըլլալով, պիտի տանիմ յետս իբրեւ յիշատակ այն գեղեցիկ տեսարանը, զոր տեսայ անցնելով Լոմպարտիա և պտտեալով ի Միլան : Անվերաս' հիւսիսային վեներտիկը, որ յետ դարերու ունեցաւ ազատութեան բաղդը, այն աստիճանի յառաջադիմած է՝ որ մենք

ալ կը զարմանանք : Մեր նաւահանգիստը, երբեմն տխուր և լքեալ, փութով աշխարհքիս երրորդ նաւահանգիստ ըսուելու պատիւն ունեցաւ. ի Պեդիմաքամենին ալկ'աշխարհիք եռանդով նոր շաւիղներ բանալու մեր ճարտարութեանց, ուրիշ փոխարէն չպահանջելով բայց հաւասար իրաւունք վաստակելոյ : Նոյն եռանդը կը տեսնամ' նաև մեր չորս կողմը, և սրտանց կը մաղթեմ այս գեղեցիկ խաւիոյ, միացեալ իմաստուն ազատութեան սիրով և վրաստահ Ազնուազարմ' իշխանաց վրայ, որոնք զիրքը կը կառավարեն, այնպիսի երջանիկ ճակատագիր մը որպիսի ունեցանք մենք կէս դարէն ի վեր :

\* \*

Ճառախօսութիւնը լմննալէն ետքը, մեծապատիւ նախագահը Պեդիոյ թագաւորին Լեոքոյտի Բ առանձնական ատենադպրին հեռագիր մը կարգացորուն մէջ կ'ըսէր .

« Վեհափառ թագաւորին մեծապէս սիրտը ելիր է, իմանալով ժողովքին առնաւ ըրած շնորհաւորութիւնքը, Նեկրի ասպետին առաջարկութեամբ » : Յետոյ նախագահն թէ՛անոյի իշխանը հրաւիրեց խօսելու, որ միացեալ նահանգաց կարֆիլտ նախագահին մահուան համար մեծապէս ցաւ ցուցուց, և թարգման մ'եղաւ ժողովոյն ընդհանուր ցաւակցութեան :

Այս խօսքերը ծափահարութեամբ ընդունուելէն վերջը, նախընթաց գումարման բանախօսութիւնքը մտիկ ընելէն ետքը, առանձնական խումբերէն երկու առաջարկութիւնք եղան, զորս ժողովքը ընդունեցաւ :

Ապա Մասսարի տեղապահն, որ մասնակից էր Մադէուչիի ճանապարհորդութեան, երկայն պատմութիւն մը կարգացայն երեւիլճամբորդութեան, պատմութիւն մը՝ որ շատ անգամ միաձայն ծափահարութեամբք ընդունուեցաւ :

Ընթերցումը լմննալէն վերջը, նախագահը Բարդուգալի գլխաւոր նուիրակը զՍերբա-Քինդոյ կը հրաւիրէ խօսելու,

և ասիկայ կ'ըսէ՝ որ ոչ իբրև նուիրակ և ոչ իբր ճամբորդ պիտի խօսի, այլ իբրև Բորդուգալցի մը առ իտալացին Մասսարի. և այս խօսքերը շատ ծափահարութեանց պատճառ եղան:

Նախդիկալ ուսուցիչը յաջորդելով, կը յայտնէ որ իբր ճամբորդ պիտի խօսի, թուելով այն դժուարութիւնը և վտանգները հասարակաց օգտին համար վաստակաւաց դիմացը կ'ելլայ, և յիշելով մասնաւորապէս Ժողովրդաց անվտանգութիւններէն առկէ ելած դժուարութիւնը, առաջարկեց որ Ժողովրդը ոտը ելլայ 'ի պատիւ Մագէտուչիին: Ամենքն ալ ոտը եղան:

Թէանոյի իշխանը շնորհակալ կ'ըլլայ Սերբա-Բինդոյին, Նախդիկալին և Մասսարիին իրենց խօսակցութեանց համար, և կը յայտնէ որ այս ուսման համար մեռնողը՝ գիտութեան և հայրենեաց արժանապէս ծառայած են, և որ Մագէտուչիին անունը պէտք է գրուի գիտութեան վկայութեանց մէջ, իբրև գրգիռ ազնուական և անշահասէր վաստակոյ:

Ուսուցիչն փերտինանտոս Պերդի' Պոլոնիայի նուիրակը՝ ոտը կ'եկլայ և շնորհակալ կ'ըլլայ Մասսարիին և Ժողովրդին, այն պատիւներուն համար որ կ'ընէին իր սիրելի Պոլոնիայի մեծապատիւ որդւոց մէկուն:

Ուղղորմանս նախագահը, Մագէտուչիին ընծայեալ պատիւներուն վերջաբան մը կը դնէ, ըսելով որ իր անունը անմահ է, և յետոյ կը հրաւիրէ զՊ. Գրեվոյ խօսելու Միջին Ամերիկա ըրած ճամբորդութեանց վրայ:

Ուսուցիչն կուիտօ Գորա՝ Պ. Գրեվոյին խօսակցութենէն առաջ քանի մը գիտողութիւնք կ'ընէ Ամերիկայ երկրներուն շատ մը անստոյգ տեղեկութեանց վրայ և մասնաւորապէս Միջին Ամերիկայ գետերուն ընթացքին վրայ, որ բոլորովին անծանօթ են կամ մասամբ մը և եթ ջննուած:

Ժողովքը Պ. Գրեվոյի Միջին Ամերիկայի արշաւանքին պատմութիւնը կը լսէ և զայն ծափահարութեամբ կ'ընդունի:

Յետ Պ. Նախդիկալի և ուրիշներուն կարճ խօսից, 'ի գովեստ Պ. Պիննէզի խմբագրի «Նիսի Եւրօք Հերալտի» որ մեծ նպաստիչ եղեր էր աշխարհագրական արշաւանաց մը, Թէանոյի իշխանը կը ծանուցանէ որ երկրորդ օրը առաւօտեան ժամը 9ին, ընդհանուր գումարումն պիտի ըլլար ընդ նախագահութեամբ դքսին ճէնովայի: Այս պիտի լրջ մը վրայ Ժողովականք ուրախացած կը բաժնուին և նիստը կ'աւարտի:

## ԸՆԴՀԱՆՐԱՅԱՆ ՆԻՍՏ ՓԱԿՄԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ

### 23 Սկստեմբեր.

Առաւօտեան իններորդ ժամուն Սպիդիոյ վեհապ. իշխանն թովմաս՝ դուքս Ճենովայի՝ Ժողովոյն գահադուխ կը բազմի՝ հասարակաց գումարածայն ծափահարութեանց մէջ, և կը խօսի հետեւեալ ճառը ընդհատեալ մերթ ընդ մերթ 'ի միաձայն շառաչաւոր ծափահարութեանց:

Երբոր, գեռ այն ինչ տարիուկէս կ'ըլլայ, այս պատմական ասիւնքներէն խարխիս վերուցի, բնաւին հեռու էր ինծմէ մտածելն որ դառնալու ժամանակս պիտի գտնեմ՝ հօս այսպիսի անուանի մարդկանց ըն-

տի և մեծաթիւ հուարումն մը, յամենայն կողմանց հօս միախմբեալք յարգութիւն ընծայելու պատմութեան մը, որ այնքան և այնպիսի աղնուագին յիշատակներ կը յիշեցնէ այս հնապանք քաղաքիս մէջ:

Իւր առի այս ուրախալից գործոյս վրայ՝ երբոր ես ասկէ շատ հեռու կը գտնուէի. և յօժարամիտ ոգւով ընդունեցայ յարգոյ անձանց հրաւերն, որ կան 'ի գլուխ իտալական Աշխարհագրական ընկերութեան, այսինքն յանձն առնուլ այս համադգային ժողովոյն նախագահութիւնը:

Ինչ որ ձեռքէս կու գար ամեն բան ըրի՝ ժամանակին լեցընելու այնքան բարեացապարտ անձանց իղձը, որ և յիս ամենա-

կենդանի էր: Այլ պարտքն, և անխուսափելի պատահարը, որ կը հակառակին անոնց խորհրդոց որոնք յնչպիսիք ովքիսանոս կը վստահին, յապողեցուցին իմ համբաւս: Եւ ծանր, մահուանդ թէ ամենածանր էր իմ ցաւս այսպիսի դիպուածի համար:

Այսպէս ոչ միայն իմ տհաճութիւնս բոլորովին դադրեցաւ, այլ փոխեցաւ յանկեղծ հաճութիւն, երբոր հասնելու ատենս գիտցայ թէ իմ ականաց ուշանալս, իտալական գիտութեան համար բարերարող դէպքի մը պատճառ եղեր էր, այսինքն թէ ժողովը բացուեր էր նոյն իսկ թագաւորէն և զուարթացաւ ներկայութեամբ իր օգոստայաւ Սմուսոյն:

Այս հանդիսաւոր գործն, միւսոյն հետ միացած, որ սովորական բուն չէ, այն է իտալացուց բազմաթիւ ամբօրին, որ ինչպէս որ գիտցայ, իրենց ամենասիրելի թագաւորին չորս կողմը պսակ կը յօրինէին, յայտնապէս կը ցուցնէ, որ Աշխարհագրութիւն, այս ազնուական գիտութիւնն, յիտալիա յամենայնուց կը մեծարուի, սկսեալ Անկէ որ կը նստի զահուան վրայ մինչև անոր համեստագոյն մշակողը:

Յարգանաց այս մասնական վկայութիւնը, զոր իմ երկիրս կու տայ գիտութեան, մեծ միջթարութիւն է, ինչպէս անոնց ամենուն որ աշխարհագրական հրահանգաց յառաջդիմութիւնը կը սիրեն, այսպէս նաև ինծի ալ, որ երկրագնդիս զանազան ճամբաները պորտոնու ատենս, փորձով գիտցայ որ այսպիսի անդուլ յառաջագիմութենէ որչափ բան կրնայ խոստանալ ոչ միայն գիտութիւնը այլ ամբողջ ընկերութիւնը իրեն ազգի ազգի սիրտոյց մէջ: Պէտք եղաւ որ համոզուիմ, որ երբեմն ժամանակի ժողովուրդները բաժնող արդէնները, կամաց կամաց կը տապալին. և բնաւք ամեն կողմանէ կը մրցին վերցընելու տակաւ բողոքովին այն քողը, որ մինչև ցարդ մեզմէ ծածկեց մեր մոլորակին մեծ մասը:

Եւ այս քողոյն ոչ փոքր ծաւը մը անվրէպ բացուած սրտի ըլլայ այս օրերս ձեր աշխատութեանց և ձեր հետախուզութեանց քննութիւններէն. յորոց ապահով եմ, որ աշխարհագրական գիտութիւնը իրեն բաղմաթիւ և զանազանեալ պարապ-

մանց մէջ ոչ թեթեւ օգուտ սիրտի քաղէ: Ասոր համար իմ անկեղծ մաղթանքներս կ'ընեմ ձեզի:

Անբնական գրաւորանք են ասոր ձեր մէջը ոչ սակաւ օտարը և մերայինը, որոնք այս համադրային գումարման մէջ բերին նոր երկիրներու և նոր ճանապարհաց սուկաւաբիւտ տեղեկութիւններ, ինչպէս նաև նոր ճոխութեանց՝ որ 'ի ձէնը՝ քննուած անբնական զաւուաց մէջ կը ծածկուին:

Առ ձեզ ուրեմն, ով անյաղթելի արտյեանք գիտութեան և մարգկութեան, ես ամենուն առջև, իբրև ծովային գինուոր և առանց մանուածոյ բանից կու տամ իմ մտերմական և անկեղծ ողջոյնս: Գուք աղէկ փոխարինելիք գիտութեան, և իրաւունք ունիք ամենուն սիրելութեան:

Եւ ոչ զձեզ պիտի մոռնամ, որ առանց կտրելու հեռաւոր երկիրներ և ոչ անցնելու գաղտնածածուկ ծովեր, ձեր հայրենական երկիրներէն եկեր էք հօս, բերեր էք ձեր աշխարհագրական ուսմանց խաղաղաւէտ և անդորրագոյն զաշտաց մէջ ստացած առատ պտուղն:

Եւ շատ ուրախ եմ ձեռք առնելու այս յարմար առիթը՝ վկայելու ձեր միջոցով՝ այն երկիրներուն, զորս գուք կը ներկայացնէք, իմ շնորհակալու սիրտս սիրալիւ և փութաջան ընդունելութեան համար, որ ձեզմէ շատերն ուղեցին ընել ինծի և իմ երկրիս իմ ճանապարհորդութեանս ժամանակ:

Ուրախութեան յետին խօսք մը հարկ է որ դարձնեմ առ ձեզ, ով մեր սիրատուն, չակ իտալիոյ որդիք, և 'ի վեր քան զընտաւս առ ձեզ, որ յօրինէք ՂԱ՛շխարհագրական Ընկերութիւն, որուն սիրտն պարտական եմ այն հաճոյական յուզմունքը՝ զոր այս վայրկենիս կը զգամ:

Եւ կ'աւատեմ՝ առ Վենետիկ ողջունով մը, որ՝ արժանապէս գինքը ներկայացընողաց ձեռքով, որ այս եղական պիտոյից մէջ ցրցուց թէ հին կայծը որ երբեմն ամեն տեղ գիտցաւ սփռելու աշխարհագրական խուզարկութեանց համար ազդու և բարերար հուր մը, և միշտ բարձր բռնեց իտալիոյ դրօշը, տակաւին մարած չէ, այլ մինչև ցարդ վառեալ է իր գործունեայ որդուց մէջ:

## ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՐՐՈՐԴԻ ԺՈՂՈՎՈՅՆ

ՈՐ Ի ՎԵՆԵՏԻԱ

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Մեծ եւ արժանի յիշատակաց ապագայ դարուց դէպք մ'եղաւ, — որ անմոռաց պէտք է մնայ մեր ազգին մէջ ալ, — այն՝ զոր վիճենտիկ ընծայեց մեզ՝ Համազգային Աշխարհագրական Ժողովով մը ներկայանալու ընդհանուր աշխարհիս առջեւ՝ մեծապանծ եւ հզօր ազանց քով, ոչ իբրեւ անոնց նախանձորդ մը, — զոր եւ ոչ կրնանք մտքերնէս անգամ անցնել, նկատելով մեր չափաւորագոյն եւ նորաբողոք վիճակն, — այլ ցուցնելու միայն, թէ՛ յԱրեւել կայ Հայ անուամբ ափ մը ժողովուրդ, որ յետ Յուսիս, իրեն հզամբքն եւ յառաջադիմութեան թափովն, պէտք է քաշէ գրաւէ Արեւմտից հայեցումը:

Ձխարուեցանք մեր այս կարծեաց եւ ակնկալութեան մէջ: Արդէն այս Ազգը այլուր, 'ի կարգի նմանօրինակ հանդիսաւոր ակմբի մը — 'ի վերաժողովն Պետլինու — ուրիշ նպատակաւ՝ Եւրոպացուց ծանօթացած էր: Ոչ ոք մեր այս նոր ձեռնարկուած թիւնը յանդգնութիւն համարեցաւ, այլ մանաւանդ ձեռնտուութեան, փութոյ եւ սիրելութեան համակրութիւններ, թէ 'ի քաղաքիս կազմող Աշխարհահանդիսին կարգադիր անձինքը եւ թէ իտալական Աշխարհագրական Ընկերութիւնն յայտնապէս ցուցին մեզի: Եւ մենք սրտապնդեալ գործեցինք:

Ոչ միայն մեր Տպարանն եղաւ՝ որ այսպիսի գործոյ մը զմեզ խրախուսեց, այլ մեր մէջը 'ի ժամանակիս երեւցած արժանաւոր Անուն մը, անուն մը՝ որուն համբաւն քառասուն տարուինէ 'ի վեր հայ բերանները պարծանօք կը յեղյեղեն, որ, — եւ գիտեմ որ զինքը գովելովս, ազգին նոր ծանօթութիւն մը տուած չեմ ըլլար, եւ ոչ մեզի սնափառութեան ցոյց մը, — կրնար ինչուան հօս ներկայացեալ մեծ ազգի մը փափագելի ըլլալ՝ իրեն նշանաւոր գիտնականաց կարգին մէջ այսպիսի մէկն ալ ունենալ:

Այն գիտութիւնն, որ թերեւս մեր մատենագրութեան մէջ զմեզ այնպէս չէր քաջալերեր ուրիշ ազգաց առջեւ ելլելու. այն գիտութիւնն, որ նկատմամբ այն երկրին, զոր խրոխտանօք մեր Հայրենիքը կ'անուանենք, թերեւս ամօթ մը ձգեր մեր հաւկտիս վրայ, — վասն զի 'ի մէնջ, ինչպէս որ պէտք է, հանչցուած, քննուած, տեղադրուած չէ —, ընդհակառակն գեթասիրաբար մեծարեց մեր վերջի կրկին դարուց աշխատութիւնքը, եւ վարձատրեց զմեզ:

Ուրիշ փոքր ազգաց, — որոնք սակայն միաբան սեպական գաւառի մը մէջ բնիկ անուն մը եւ տէրութիւն մը կը կազմեն եւ ազգային իշխան մը կամ գլուխ մ'ունին, — Աշխարհահանդիսին մէջ յերեւան դրուած բաներուն քով, մեզի կ'երեւար որ անոնց հաւասարելու համար ուրիշ բան չէր պակսեր, բայց եթէ դրօշ մը միայն, որ ինչպէս անոնց՝ ծածանէր Աշխարհահանդիսին փոխ առած հոյակապ շինուածոյն վանդակասեանց վրայ: Ասկէ գուրկ ըլլալիս, ուրիշ կարեւոր եւ անխուսափելի հետեւանք մը յառաջ կը բերէր: Զէինք կազմեր տէրութիւնն մը, ուստի չունէինք նաեւ իրաւունք, ուրիշ ժողովրդոց պէս, առանձին սրահ մը կամ սենեակ մը պահանջելու մեր Աշխարհագրական հանդիսին համար. — ընտրեցինք դնելու իտալական մասին մէջ<sup>1</sup>:

<sup>1</sup> Գիտնական ազգայինք, որ Օսմանեան Պետութիւնն ընտելեցաւ չէր ոչ Աշխարհագրական Ժողովոյն և ոչ Հանդիսին մէջ:

Չունէինք, ինչպէս դժոյն, այսպէս նաեւ նշանակ մը, որով մէկալ ազգերն իւրաքանչիւրն իր մասին մէջ իրենց Հանդիսին գլուխը գողողաբար պատկեր էին: Սակայն մենք ալ մեր կողմանէ քնաւին աննշան չուզելով մնալ, թէպէտ տխուր, բայց պատշաճ եւ սիրաբորբոք մտածութեամբ, մեր Հանդիսին ճակատը բարձրացուցինք՝ ի պատկերի մեղամաղծիկ աւերակ մը՝, — վասն զի ստուգիւ այս է մեր Հայրենեաց հիւմակուան ներկայացուցիչ նշանն, — վրան եւրոպական գրով Հայաստան եւ *Միփրաբանք* գրած: Ոչ ոք կ'անցնէր այն սրահէն, յորում Հայկական Հանդէսն 'ի տեսիլ դրուած էր, որուն աչքը չքաշէր այն պատկերն, եւ հետաքրքրական հայեացք մը չտար այն Հայաստանի վրայ խօսող օտարազգի բազմամիւ եւ այլալեզու գրող, եւ չընթեռնուր հայկական մատենից տիտղոսներն, — ամենքն ալ գեղեցիկ կերպով կազմած եւ շարուած — եւ չբանար Հայաստանի լուսանկարուց եւ վիմագրութեանց, — յորոց մեծագոյն մասն մեր հուշակաւոր Շիրակայ մայրաքաղաքին տխրագին աւերակներն կ'ընծայէին, — գեղեցկակազմ տետրակներն, եւ չգարմանար հայ ժողովրդեան խնամքով փորուած Աշխարհացոյց տախտակաց վրայ. դրած էինք հօն նաեւ Քիւրքճեան Յովհաննու Անուոյ չքնաղ լուսանկարքն, եւ այլն:

Զեմ ուզող հօս մի առ մի յիշատակել այն ամեն բաներն, որ կը զարդարէին մեր Հանդիսին մասն. անոնց ամենուն ցանկը հօս վարը կը գտնեն ընթերցողք, ինչպէս նաեւ կարեւորագոյն գիտելիքներ անոնց երեւեագունիներուն վրայ Վ. Հ. Գեւորդ Մ. Ալիշանի Հայաստանի Աշխարհագիտութեան հմուտ ճառին մէջ, զոր հայերէն թարգմանած կը ղեննք յետագայ իջից մէջ:

Կը կարծէինք՝ որ լեզունիս եւրոպացւոց անհասկանալի ըլլալով, այնչափ իրենց 'ի քնէ հետազօտիչ եւ արժուն նկատութեան նիւթ պիտի չըլլայ մեր Հանդէսը. սակայն այս մեր վախն եւ կասկածը փարատեցին Գաղղիոյ, Աւստրիոյ, Հունգարիոյ, Զուիցերիայի տէրութեանց մտացի Գործակատարք, որոնք գովեցին ազնուական խօսքերով եւ շատ հետաքրքրական եւ կարեւոր համարեցան մեր Մասն:

Տեղոյս այլ եւ այլ լրագրող մէջէն, Բատուայի օրագիր մը, անուանեալ *Օրագիր Բատուայի*, այս խօսքերով կ'ակնարկէ մեր Հանդէսը. « Սրբոյն Ղազարու Մխիթարեան հարք — որոնց տպարանը անշուշտ հուշակաւոր ըլլալու համար Հանդիսի պէտք չունի — ուսումնական ճոխ գրատուն մ'ունին »:

Ուրեմն գլուխ բանիցս, մեզի երկու մրցանակ տրուեցաւ, էր եւ Բ. Դասուց մէջ: Եր Դասուն մէջ, որ էր Պատմական Աշխարհագրութիւնն, արժանի դատուեցանք ընդունելու *Վիշապիկ պատուոյ Ա. Կարգի*. եւ յիրաւի, Շիրակայ Տեղագրութիւնն չէր կրնար ուրիշ ստորնագոյն աստիճանի մրցանակի մը գոհ ըլլալ, այն գրուածքն՝ որ ուրիշ մեծագոյն գրուածքի մը իբրեւ ճաշակ հրատարակուեցաւ, է յինքեան առանձին հոյաւ կապ յիշատակարանի մ'անկիւնակալ քարն, որուն հիմնարկութիւնն պէտք էր այսպիսի աշխարհալուր եւ տիեզերաքարող կերպով ըլլալ:

Բ. Դասուն մէջ, որ էր Աշխարհագրական Տնտեսագիտութիւնն, արժանաւոր Պատուոյ յոշարար մրցանակին, յորում առաջին տեղին կը բռնէր Հ. Ներսէս Սարգիսեանին Մեծ եւ Փոքր Հայոց Տեղագրութիւնն:

Այս մրցանակաց ծանուցումն առիթ առնելով մեզ, կը յայտնենք նաեւ, որ այս առաջին անգամ չէ որ եւրոպացւոց դիմաց Հայ ազգը կը պատուի. ամեն մեծ ընդհանուր Աշխարհահանդիսից մէջ — 'ի Լոնտրա, 'ի Բարիզ կրկին անգամ, 'ի Վեննա. — Մխիթարեան Միաբանութիւնը — որուն որ եւ իցէ ընդունած փառքը նաեւ միշտ հայկական է — մատենագրական գրուածներուն եւ թարգմանութեամբք, ինչպէս նաեւ տպագրութեան գեղեցկութեամբ, Ա. աստիճանի վկայագրի եւ արժան մետալներու արժանի եղած է:

1 Կը ծանուցանէր որ այս պատկերը Նկարող Հայ երիտասարդ մ'եղաւ, Պ. Սուրեն Սուրենեան անուամբ, 'ի Մեծագոյ Գեղեցիկ Արուեստի պարագոյց, որ նոյն օրերն կը գտնուէր 'ի Վեննայի իրեն սիրելի ուսանից զբաղելով: